

Ա. Ա. ՄԱՏԹԵՎՈՍԵԱՆ

ԱՌՎՈՒՅՑ

ՀԱՍՏՈՒԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1947

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

12114

633-31

15-33

Библиотека У.У.

Универс.

30

✓
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

633.31

5-33

Ա. Ա. ՄԱՏԹԵՎՈՍՅԱՆ

ՅՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԱՌՎՈՒՅՏ



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ

Պատ. խմբագիր՝
Պրոֆ. Դ. Խ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

А. А. МАТЕВОСЯН
ЛЮЦЕРНА
(На армянском языке)
Изд. АН Арм. ССР, Ереван, 1947 г.

ԱՌՎՈՒՅՑՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական տնտեսության մեջ առվույտի նշանակությունը մեծ է: Նա թե՛ կանաչ և թե՛ չոր վիճակում հանդիսանում է լավագույնս կեր:

Առվույտը տալիս է բավականին մեծ քանակությամբ կեր: Առվույտից ստացված խոտի կերային բարձր հատկությունները վաղուց է գնահատվել թե՛ գիտության և թե՛ պրակտիկայի կողմից: Մեկ հեկտար առվույտի դաշտից ստացվում են ավելի շատ սպիտակուցային նյութեր, քան որևէ այլ կերաբույսից: Այստեղ մարսվող հում պրոտեինների քանակն ավելի շատ է, քան երեք-չուկի մեջ: Ըստ Ա. Ֆադեևի մեկ հեկտարից ստացվող 600 ցենտներ առվույտի կանաչ մասսայի և մեկ հեկտարից ստացվող վարսակի 30 ցենտներ հատիկի ու 50 ցենտներ դարձանի անդանյութերը համեմատելիս պարզվում է, որ առվույտը հում պրոտեինն և մոտ երեք ու կես անգամ, մարսվող հում պրոտեիններ չորս անգամ և մարսվող սպիտակուցներ երկու ու կես անգամ ավելի է պարունակում, քան վարսակը:

Առվույտի խոտը մարսվող սպիտակուցների և ածխաջրատների պարունակությամբ շատ մոտ է ցորենի թեփին, այլ խոտքով՝ 11 մաս առվույտի խոտն իր մարսվող սպիտակուցների տեսակետից կարող է փոխարինել 10 մաս ցորենի թեփին: Շնորհիվ նրա, որ առվույտը մեծ քանակությամբ սպիտակուցներ է պարունակում, պրակտիկայում նրան խառնում են սպիտակուցների քիչ պարունակող կեռերի հետ ու նոր կերակրում անասուններին:

Բամբակացան շրջաններում կանոնավոր ագրոտեխնիկայի պայմաններում առվույտի հեկտարից ստացվում է մինչև 100 ցենտներ չոր խոտ, մյուս շրջաններում՝ 50—60 ցենտներ: Առվույտը և կանաչ և լավ չորացրած վիճակում հարուստ է հետևյալ վիտամիններով՝

A—աճման վիտամին.

B—վիտամին, որը կանխում է ներվային սխառմի հիվանդությունը.

C—հակացինգային վիտամին.

D—հակառախիտային վիտամին, որի նշանակությունն անասունների աճման և առողջ մնալու խնդրում մեծ է:

ԱՌՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Առվույտը համարվում է ամենահին կուլտուրաներից մեկը: Նրա մշակութունը հայտնի է եղել մարդկությանը մեր դարաշրջանից հաղաթուր տարիներ առաջ: Նա հին երկրագործական երկրներին կուլտուրա է համարվում: Պատմական հետազոտություն անգամ մշակվել է Արաբիայում, Իրանում, Եգիպտոսում, Միդիայում (վերջին բառի հետ է կապված առվույտի լատինական անունը՝ Մեդիկադո), որտեղից և տարածվել է մերձակա երկրները: Ըստ հունական շատ հետազոտողների (Թևոֆրաստ, Պլինիոս և այլն), Հունաստանում առաջին անգամ առվույտը մշակվել է մեր թվականությունից 4 դար առաջ:

Միջին-Ասիական ռեսպուբլիկաներում, հատկապես Թուրքմենստանում, առվույտը տարածվել է պարսիկների միջոցով (պատերազմական զործողությունների հետևանքով) մեր թվականությունից դարեր առաջ: Այստեղից առաջին անգամ առվույտի սերմը Չինաստան են տանում և մշակում 126 թվին: Գրականության մեջ առաջին հաղորդագրությունը առվույտի մասին հայտաբերվել է Ասորագետների կողմից Բաբելոնական ձեռագրերում դեռ 700 տարի մեր թվականությունից առաջ Ասպաստի անվան տակ:

Ինչ վերաբերում է այն բանին, թե մեզ մոտ, Անդրկովկասում կամ մասնավորապես Հայաստանում որ ժամանակվանից է մշակվում առվույտը, ապա պետք է ասել, որ անկախ այն հանգամանքից, որ մեր ձեռքի տակ չկան այդ մասին որևէ հետազոտական տվյալներ, այնուամենայնիվ պետք է ենթադրել, որ Հայաստանում առվույտի մշակությունը նույնպես հին ժամանակներից է սկսվել, ինչպես Իրանում:

Առվույտը պատկանում է թիթեռնածաղկավորների ընտանիքին: Երկրադնդում տարածված առվույտի մինչև 50 տեսակներից կուլտուրայում ընդգրկված են միայն մի քանիսը:

1. Սովորական առվույտ.—Մաքուր վիճակում կարելի է հանդիպել ՍՍՍՄ հարավային մասերում, իսկ հյուսիսում սրա մաքուր ցանքեր համարյա թե գոյություն չունեն: Սովորական առվույտն ունի խոր արմատներ, բարձր ցողուններ, ծաղիկները լինում են կապույտ, մանուշակագույն, երբեմն սպիտակավուն, երբեմն էլ բաց-կապույտ: Պտուղը զսպանակաձև թավոտ պատիճ է 2—3 պտույտով: Մյուս տեսակների հետ համեմատած սա տալիս է ավելաբար բերքը, հնձից հետո աճում է արագ:

2. Իեդին մանգոլաձև առվույտը սովորական առվույտից տարբերվում է իր դեղին ծաղիկներով, մանգոլաձև պատիճով, սերմերը ավելի մանր են, քան սովորական առվույտինը և նրանց մոտավորապես 30 տոկոսը քարացած սերմեր են: Համեմատաբար երաշտադիմացիուն և ցրտադիմացիուն է: Արմատները ճյուղավորվում են վաղից: Վայրի վիճակում աճում է համարյա բոլոր տեղերում՝ հյուսիսից սկսած մինչև հարավային տաք շրջանները: Այս տեսակը ավելի շատ տարածված է Արևմտյան Սիբիրում: Տնտեսական տեսակետից տալիս է ավելի քիչ բերք. նույն տարում հնձվում է միայն մեկ կամ երկու անգամ, հնձից հետո շատ դանդաղ է աճում: Կուլտուրայում շատ քիչ է տարածված:

3. Հիբրիդային առվույտ.—Սա սովորական և դեղին առվույտներից բնական պայմաններում ստացված հիբրիդ է: Ծաղիկները բաց-մանուշակագույն են, պտուղը թույլ զսպանակաձև, հազիվ մեկ պտույտով: Իր արտադրողականությունը էլ բռնում է միջին տեղը, սովորական առվույտից քիչ բերքատու է, սակայն ավելի բերքատու է, քան դեղինը: Երաշտադիմացիունության և ցրտադիմացիունության տեսակետից նույնպես միջին տեղն է զբաղում:

4. Գայլուկամամ առվույտը մեկ կամ երկամյա բույս է, սովորաբար ցանքի երկրորդ տարին ոչնչանում է: Կիսականգուն է, տերևները նման են երեքնուկի տերևներին, ծաղկաբույլը վարձ է, խիա, դեղին գույնի, պտուղը կարճ է, երկամաձև

և պարունակում է մեկական սերմ: Մրան արոտային տնտեսութ-
յունում օգտագործում են որպես խառնուրդ այլ կերպույտների
հետ:

ԱՌՎՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Առվույտի մշակման տարբեր զոնաներում տարածված են
տարբեր ձևեր: Միջին Ասիայի ոռոգվող շրջաններում տարած-
ված են միջին-ասիական առվույտները, որոնցից մեծ չափով
մշակվում են նաև Մուղանի և Արարատյան դաշտավայրերում:
Երկրորդ զոնայում, այն էլ տաք ու համեմատաբար բարձր խո-
նավութուն ունեցող շրջաններում, մշակվում են Ֆրանսիական
ծագում ունեցող առվույտներ. այդ ձևերը երբեմն մշակվում են
նաև տափաստաններում: Երրորդ զոնայում, այն է՝ տափաստան-
ներում մշակվում են կամ մանգաղածե կամ թե չէ հիբրիդային
առվույտները: Չորրորդ զոնայում, այն է՝ լեռնային շրջաններում
մշակվում են տեղական ծագում ունեցող և երկար ժամանակ այդ
պայմաններում մշակվող լեռնային առվույտները: Միջին-Ասիա-
կան սեպուրը լիկաներում մշակվում են առվույտի տեղական ծա-
գում ունեցող բաղամթիվ ձևեր (Խիվայի, Ֆերգանայի, Թուրքմե-
նեստանի և այլն), որոնք տարբերվում են միմյանցից ագրոքոլո-
գիական մի շարք հատկանիշներով: Խիվայի ձևն ունի պատկոյ
վարդակ, ծաղիկը մուգ-մանուշակագույն է, ողկույթը համեմա-
տաբար կարճ է, ունի լայն տերևներ և ուժեղ ճյուղավորված ցո-
ղուններ, սերմերը լորձեղ են, ձմադրամացկունությունը բարձր
է, աճում է դանդաղ, բերքատու չէ, ուժեղ վարակվում է դանա-
դան հիվանդություններով:

Խիվայի ձևը մեր պայմաններում Արարատյան դաշտում
տալիս է ցածր բերք համեմատած տեղական առվույտի հետ:
Ստացած խոտը լինում է անորակ, որովհետև տերևների մեծ
մասը մինչև հնձելը թափված են լինում: Խիվայի առվույտը վատ
բերք է տալիս նաև տափաստաններում և անջրդի պայմաննե-
րում:

Ֆերգանայի առվույտը հնձից հետո աճում է միջակ արագու-
թյամբ, թուփը ցանցառ է, վարդակը պտուկող, բույսը ունի բարձր
ցողուններ: Ֆերգանայի հովտում սա համարվում է շատ բերքատու:

Թուրքմենստանի ձևը հնձից հետո աճում է արագ, թփի
ձևը կանգուն է, ողկույթը թիտ է և կարճ: Համարվում է միջին-

ասիական ծագում ունեցող առվույտներից ամենավաղահասը: Սրա ձմռադիմացկունությունը թույլ է, քան Ֆերգանայի առվույտինը:

Ֆրանսիական առվույտները ընտրող են իրենց խոշոր, հակառակ ձվաձև, բաց կանաչ տերեղիկներով, խոշոր ծաղիկներով և պատիճներով: Սերմերը երիկամաձև են, երաշտադիմացկունությունը և ձմռադիմացկունությունը ցածր է: Հնձից հետո տալիս են ուժեղ աճ:

Ուկրաինայի առվույտներից հայտնի է Գրիմմ Ջայկեիչը: Գրիմմը հիբրիդային (ֆրանսիականի և դեղին առվույտի) ծագում ունի: Աճում է դանդաղ, ուժեղ ճյուղավորվում է և ունի տերևային շատ մասսա: Փալտավայի փորձակայանում բարելավված Գրիմմ Ջայկեիչը տափաստանում տալիս է ավելի շատ բերք, քան սովորական Գրիմմը: Հաջողությամբ կարող է մշակվել նաև Կուրսկի, Վորոնեժի և Կուլբիշևի մարզերում:

Մանգաղաձև առվույտներից տարածված է Կրասնոկուտի դեղինը (ակադեմիկոս Կոնստանտինովի սեկիցիան): Տերևները նեղ են, ծաղիկները դեղին: Ուժեղ քսերոֆիտ է, ձմռադիմացկուն է: Արմատային սիստեմը ուժեղ ճյուղավորված է: Աճում է շատ դանդաղ, երրորդ հունձ երբեք չի լինում: Ավելի խմուռ է, քան մնացած առվույտները: Բոլոր դեպքերում էլ տալիս է ավելի պակաս բերք, քան Գրիմմ Ջայկեիչը: Զրոփի խոտացանության պայմաններում պիտանի չէ: Կարող է մշակվել Սովետական Հայաստանի նախալեռնային և լեռնային շրջանների անջրդի որոշ հողերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՌՎՈՒՅՏՆԵՐԸ

Հայաստանը, որպես հին երկրագործական երկրներից մեկը, բաղմամբով կուլտուրաների հետ միասին, դաբեր շարունակ մշակել է նաև առվույտ: Նա համարվել է բազմականին բերքատու կուլտուրա և հիմնականում մշակվել է Արարատյան դաշտում ու նրա սահմանակից նախալեռնային շրջաններում: Հետագայում, առվույտի ցանքերը ընդարձակելու կապակցությամբ, ոչ-ճիշտ ձեռով լուծելով սորտի խնդիրը, Հայաստան են ներմուծել բազմաթիվ այլ սորտեր, որոնք մեր պայմաններում ոչ միայն վատ

բերք են տվել, այլև խաչաձև փոշոտվելով տեղական առվույտի հետ, իջեցրել են նրա որակը:

Տեղական առվույտի մաքուր օջախները պահպանվել են շատ քիչ տեղերում, այդ՝ Ապարանի, Միկոյանի, Ազիզբեկովի, Կոտայքի որոշ գյուղերն են, մասամբ էլ Արարատյան դաշտավայրի որոշ կոլխոզները:

Տեղական այդ առվույտները պատկանում են սովորական առվույտի տեսակին, ունեն ուժեղ զարգացած արմատներ, թփակալման հանգուցյը թաղված է հողում 4—6,5 մ խորությամբ, մինչդեռ բերված առվույտների մոտ դա 2—3 մ-ից ավելի խոր չի լինում: Ուժեղ թփակալում են՝ տալով 7—23 ցողուն, երբեմն էլ՝ 49 ցողուն: Ցողունները ունեն մինչև 1,5 մետր բարձրություն, սնամեջ չեն, միջհանգուցային տարածությունները կարճ են: Ունեն փարթամ տերևներ, երբեմն մինչև 4 մ երկարությամբ: Ողկույզը կարճ է՝ 4—5 մմ, խիստ դասավորված ծաղիկներով, երբեմն երկար՝ 10—12 մմ և ցանցառ: Ծաղիկները լինում են բաց-մանրիակագույն, կապույտ, երբեմն էլ սպիտակ գույնի: Պատիճն ուժեղ թավոտ է, 2—5 պտույտներով: Սերմերը մանր են, գեղնավուն, երբեմն էլ շագանակագույն, երկկամաձև:

Տեղական առվույտը թե ձմռադիմացկուն է և թե չորադիմացկուն: Ունի միջակ իմունիտետ հանդեպ մի շարք հիվանդությունների: Տեղական առվույտները տալիս են խոտի բարձր ել, այսպես օրինակ՝

1. Խիվայի առվույտը	տալիս է չոր խոտի 22,8 տոկ.	ել
2. Թուրքմենստանի »	» » » »	24,1 » »
3. Ապարանի »	» » » »	31,1 » »
4. Ազիզբեկովի »	» » » »	32,3 » »

Բերված թփերից պետք է գալ այն եզրակացություն, որ տեղական առվույտներն ունեն այն դրական հատկությունը, որ միևնույն քանակությամբ կանաչ մասսայից ավելի շատ չոր խոտ է ստացվում, քան թե Խիվայի ու Թուրքմենստանի առվույտներից: Տեղական առվույտները հարուստ են և տերեւային մասսայով. օրինակ՝ Ապարանի առվույտի չոր խոտի 57,2 տոկոսը տերեւներ են, մինչդեռ Խիվայի առվույտինը՝ 47,6 տոկոսը:

Առվույտների մոտ կոկոնակալման շրջանում ներքևի տերեւները զանազան պատճառներով թափվում են: Պարզվում է,

որ տեղական ծագում ունեցող առվույտների մոտ տերևները քիչ են թափվում, օրինակ՝ Խիվայի առվույտի մոտ երևանի պայմաններում տերևները թափվում են մինչև 3,7 հանգույցից, մինչդեռ Ապարանի առվույտի մոտ 1,2 հանգույցից, Աղիզբեկովի առվույտի մոտ 0,9 հանգույցից:

Տեղական առվույտները տալիս են բարձր բերք: Օրինակ՝ երևանի պայմաններում Ապարանի առվույտը ցանքի երկրորդ տարին տալիս է հեկտարից 89,0 ցենտներ չոր խոտ:

Աղիզբեկովի առվ. ցանքի 2-րդ տարին տալիս է հ. 93,0 ց. չ. խոտ

Խիվայի » » » » » » 48,0 » »

Թուրքմենստ. » » » » » » 53,0 » »

Տեղական առվույտներն Արարատյան դաշտի պայմաններում հնձվում են մինչև հինգ անգամ, մինչդեռ Խիվայի և Թուրքմենստանի առվույտները՝ 2—3 անգամ: Թվերն ասում են այն մասին, որ անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տեղական առվույտների բազմացման գործի վրա, օգտագործելով նրա բերողիական-տնտեսական լավագույն հատկանիշները և արագ աճող առվույտի սերմի պահանջը լրացնել այդ թանկարժեք պուլսիացանկերով:

ԱՌՎՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՍՍՈՒՄ-ում առվույտը մշակվում է տարբեր կլիմայական պայմաններում: Հիմնական դոնան դա Միուլթյան բամբակացան շրջաններն են՝ Միջին-Ասիական ռեսպուբլիկաները և Անդրկովկասը: Այս մասսիվներում առվույտը մշակվում է միայն ջրովի պայմաններում և հանդիսանում է բամբակի համար առաջիմ անփոխարինելի նախորդ:

Այս մասսիվներում մշակվում է միայն սովորական առվույտը, որը հնձվում է մի քանի անգամ ավելի, քան մշակման մյուս մասսիվներում. այսպես օրինակ՝ Միջին Ասիայի ռեսպուբլիկաներում սովորական առվույտը հնձվում է 6—7 անգամ, Մուղանի հարթավայրում՝ 5 անգամ, մեզ մոտ, Արարատյան դաշտում՝ 4—5 անգամ:

Առվույտի մշակման երկրորդ մասսիվը գտնվում է տաք և համեմատաբար բարձր խոնավություն ունեցող շրջաններում,

օրինակ՝ Կուբանում, Կրասնոդարի երկրամասում, Եվրոպայում՝ հարավային Ֆրանսիայում և այլն: Այստեղ առվույտը մշակվում է անջրգի պայմաններում: Այդ մասսիվներում նույնպես մշակվում է սովորական առվույտը, որը հնձվում է 2—3 անգամ և տալիս է 50—70 ցենտների խոտ:

Առվույտի մշակման երրորդ զոնան ՍՍՌՄ Միջին-և արևմտա-տանյան տափաստաններն են, որտեղ նա մշակվում է դաշտային ցանքաշրջանառության սիստեմում անջրգի պայմաններում: Այս զոնայում ընդգրկված են սովորական առվույտի համեմատաբար չորագրիմացիուն ու ցրտագրիմացիուն տիպերը, մշակվում է նաև դեղին առվույտը: Առվույտի բերքատվությունը այս զոնայում անհամեմատ ավելի ցածր է. այսպես օրինակ՝ Սալսկում մեկ հեկտարից ստացվում է 20 ցենտներ չոր խոտ: Չնայած դրան առվույտի մշակության նշանակությունը հիշյալ տափաստանում մեծ է, որովհետև խոպան հողերի մեկ հեկտարից ստացվում է ընդամենը 5 ցենտներ խոտ: Հետևաբար, այդ շրջանների կերի բալանսում առվույտի դերը մեծ է:

Առվույտի մշակման 4-րդ զոնան հարավային ռեսպուբլիկաների նախալեռնային և մասամբ էլ լեռնային շրջաններն են: Այս մասսիվներում մշակվում է սովորական առվույտը, այն էլ միայն ջրովի պայմաններում: Այս մասսիվներում տարածված առվույտներն աչքի են ընկնում իրենց ձմռագրիմացիությունով: Նախալեռնային շրջաններում դա հնձվում է 2—3 անգամ, իսկ լեռնային շրջաններում՝ 1—2 անգամ: Մեղ մոտ, Սովետական Հայաստանում, այդ շրջանների թվին են պատկանում Միկոյանի, Ագիզբեկովի, Գորիսի, Ղափանի, Ապարանի, Սևանի ավազանի և Ախուրյանի շրջանները:

ԱՌՎՈՒՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՆՎԵՊ ԿԼԻՄԱՏԻ

Առվույտը սովորաբար համարվում է հարավային կուլտուրա: Հետազոտողներից ոմանք (Ա. Յադե, Դ. Վերներ) նրան համարում են այն զոնայի կուլտուրա, որտեղ խաղողի վաղն է մշակվում: Ստեղծված այն կարծիքը, թե առվույտը հարավային կուլտուրա է, հիմնականում ճիշտ է, որովհետև հարավային շրջաններում նրա բերքատվությունն անհամեմատ ավելի բարձր է: Բայց սխալ կլինեք ասել, որ առվույտը միայն հարավում կարե-

լի է մշակել, քանի որ բաղմաթիվ փորձերի արդյունքները հաստատում են, որ առվույտը, խոտ ստանալու նպատակով, կարող է մշակվել և հաջողությամբ մշակվում է ավելի շատ նաև հյուսիսային շրջաններում, որտեղ առաջներում նա չէր մշակվում:

Առվույտի վերաբերմունքը հանդեպ կլիմայի որոշվում է առաջին հայացքից հակասական թվացող նրա չորս հատկանիշներից, այն է՝

ա) Առվույտը չորագիմացկուն է,

բ) » ջրասեր է,

գ) » ջերմասեր է,

դ) » ձմռադիմացկուն է:

Առվույտի մի շարք ձևերը քիչ են տուժում երկարատև երաշտներից, որի շնորհիվ էլ նա հաջողությամբ մշակվում է անջրդի շատ մասսիվներում, որտեղ մթնոլորտային տեղումների տարեկան գումարը 400 մմ-ից ավելի չի լինում: Երկրագործական չորային շրջաններում, որտեղ երաշտի հետևանքով կերպրույթներից շատերը ամբողջովին չորանում են, առվույտը միայն ժամանակավորապես դադարեցնում է իր վերերկրյա մասերի աճը, չի մահանում, բայց բերքատվությունը իջնում է: Անձրևներն սկսվելուն պես, կարճ ժամանակում վերերկրյա մասերի աճը վերականգնվում է: Նկատված է, որ տվյալ տարվա երաշտը չի ազդում առվույտի հաջորդ տարիների բերքատվության վրա: Շատ խոնավ շրջաններում առվույտը չի աճում: Առվույտի չորագիմացկունությունը կապված է նրա հզոր արմատային սիստեմի հետ՝ արմատները հասնելով խոր շերտերը, օգտվում են այնտեղ եղած առատ խոնավությունից: Բացի այդ, շնորհիվ այն հանգամանքի, որ առվույտի ցողուններն ունեն մեծ չափով զարգացած անոթներ, ընդունակ են ջուրը ավելի արագ փոխադրել տերևները, քան երեքնուկի ցողունները: Առվույտը հարավային շրջաններում կարող է բարձր բերք տալ միայն անհրաժեշտ խոնավությամբ ապահովվելու դեպքում, ուրիշ խոսքով՝ միայն արհեստական ոռոգման պայմաններում: Հարի քանակը այդ շրջաններում նույնպես կախված է ոռոգումից—խոնավության առատությունից: Այդ բացատրվում է նրանով, որ առվույտը ստեղծում է բավականին մեծ տերեային մակերես, հետևապես և գործընթացման մակերես: Ըստ Գ. Վերների մեկ հեկտար առվույտի

դաշտի գոլորշիացման մակերեսը կամ տերևներից բաղկացած մակերեսը հավասար է 85 հեկտարի: Ըստ կլիմայի մեկ հեկտար առվույտի ստեղծած մակերեսը հավասար է 50 հեկտարի: Այդ մակերեսը, որը վեց անգամ ավելի է, քան աշորայինը և 4 անգամ ավելի, քան վարսակի մեկ հեկտար ցանքի մակերեսը, գոլորշիացնում է մեծ քանակությամբ խոնավություն—ահա թե ինչու առվույտը համարվում է ջրասեր կուլտուրա: Առվույտի արանսպիրացիոն գործակիցը երկու անգամ ավելի է, քան ցորենինը, մեկ և կես անգամ ավելի է, քան նույնիսկ երեքնուկինը:

Մեխորատիվ կայանները ապացուցում են, որ 10 տոննա խոտ ստանալու համար առվույտի դաշտին պետք է տալ ոչ պակաս, քան 2000—3000 խորանարդ մետր ջուր: Այսպիսով տեսնում ենք, որ առվույտը տիպիկ ջրասեր բույս է:

Բարձր ջերմաստիճանը դրական է ազդում առվույտի դարգացման ընթացքի վրա. այդ է պատճառով, թունիսում, եգիպտոսում և այլ տաք երկրներում առվույտի մշակությունը: Միջին Ասիայում ամառվա ընթացքում բարձր ջերմաստիճանը, որը շատ հաճախ հողի մակերեսին հասնում է մինչև 70 աստիճանի, նույնպես դրական է ազդում առվույտի դարգացման ընթացքի վրա: Գիտությունը հայտնի չէ առվույտի վրա բարձր ջերմաստիճանի փաստակար ազդեցության որևէ զեպը, եթե, իհարկե, ճիշտ է կազմակերպված նրա ոռոգման խնդիրը: Նրբեմնայն խնդրում բացառություններ կարող են կազմել տաք շրջաններում ենթացանք կատարված առվույտները: Երբ ծածկոցը հնձվելուց հետո նրանք անմիջապես չեն ջրվում, ապա ստվերում հարմարված առվույտը բարձր ջերմաստիճանից տուժում է: Առվույտի ջերմասիրությունը է բացատրվում այն հանգամանքը, որ տաք շրջաններում միևնույն սորտն ավելի շատ անգամ է հրնձվում, քան ցուրտ շրջաններում: Այսպես, օրինակ, Հայաստանում մշակվող առվույտի տեղական ձևերն Արարատյան դաշտի պայմաններում հնձվում են 4—5 անգամ, իսկ Ապարանի պայմաններում՝ 2 անգամ: Առվույտի ցածր ջերմաստիճանին դիմանալու մասին հետազոտողները տարբեր կարծիքներ են հայտնում: Ոմանք կարծում են, թե առվույտը կարող է դիմանալ բավականին մեծ ստոնմանիքներին, ոմանք էլ հակառակն են ասում:

Առվույտի ցրտադիմացկունությունը կախված է շատ փակ-

սորներէյ, որոնց թվում ձյան ծածկոցը խոշոր ու վճռական նշանակութիւն ունի: Օրինակ՝ Ռեդֆելդի փորձնական դաշտում 1916/17 թ. թ.—39,4 ջերմաստիճանի պայմաններում առվույտը ցրտահարվեց 25 տոկոսով, 1919/20 թ.թ. նույն ջերմաստիճանի պայմաններում ցրտահարվեց 94 տոկոսով: Ըստ Ծտեմբլերի եվրոպայում առվույտը կարողանում է գիմանալ —25 աստիճան ջերմութեանը, բայց ձյան ծածկոցի բացակայութեան դեպքում ցրտահարվում է:

Այս խնդրում նշանակութիւն ունի նաև առվույտի սորտը, օրինակ՝ Կրասնոկուտի փորձակայանի 1911/16 թ. թ. տվյալների համաձայն՝

Վայրի դեղին առվույտը ցրտահարվել է 4 տոկոսով		
Կուլաուրական դեղին առվույտը	» 16	»
Հերրիդային առվույտը	» 28	»
Սովորական կապույտ առվույտը	» 65	»
Գրիմ սորտը	» 88	»

Այս թվերն ասում են այն մասին, որ դեղին մանգաղաձև առվույտներն ավելի ցրտադիմացկուն են, քան սովորական առվույտները: Սովորական առվույտներին պատկանող տարբեր ձևերը մեր պայմաններում նույնպես տարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի ցածր ջերմաստիճանը:

Ագրոտեխնիկական միջոցառումները նույնպես նշանակութիւն ունեն այս խնդրում. օրինակ՝ ըստ Կրասնոկուտի փորձակայանի տվյալների՝

Խիտ ցանքի դեպքում ցրտահարվել է 25 տոկ.

Նոսր ցանքի դեպքում » » 53 »

Միևնույն ժամանակի ընթացքում հարի քանակը նույնպես ազդում է ցրտահարութեան վրա. այսպես, օրինակ, Ռեդֆելդի փորձագաղտում

3 անգամ հնձելիս՝ ցրտահարվել է 27 տոկոսով

7 անգամ հնձելիս » 92 »

Առվույտի հին ցանքերն ավելի վատ են ձմեռում, քան երիտասարդ ցանքերը: Ըստ ակադեմիկոս Կոնստանտինովի տվյալների հարավ-արևելքում առվույտները 3—4-րդ տարուց հետո այլևս բերք չեն տալիս: Խոնավ հողերում, որտեղ առվույտը համարյա թե հանգստի շրջան չի ունենում, բույսերը ցրտահարվում են շատ աննշան չափով:

Առվույտը պահանջում է փխրուն օդաթափանց հողեր, փխրուն ենթաշերտով: Վերջինս անհրաժեշտ է արմատները խոր թափանցելու համար: Առվույտը հաջողությամբ կարող է մշակվել այն հողերում, որոնք ճահճային կամ դինա չեն:

Ընդհանրապես ավելի հեշտ է թվել, թե որ հողերում առվույտը վատ է աճում, քան թվել նրա համար պիտանի հողերը: Առվույտը վատ է աճում թթու, դինա և ստորերկրյա ջրերը ավելի երես գտնվող հողերում: Առվույտը ամենաբարձր բերք տալիս է այն դեպքում, երբ ստորերկրյա ջրերը 3—4 մետր խորության վրա են գտնվում: Այն դեպքում, երբ ստորերկրյա ջրերը գտնվում են հողի մակերեսին մոտիկ՝ առվույտի արմատները հասնելով մինչև ջրով հագեցած և օդից զուրկ շերտը, դադարեցնում են իրենց ուղղահայաց աճը: Առվույտի արմատները չեն կարող ապրել ջրով հագեցած և օդից զուրկ հողում, որի պատճառով էլ շատ շուտ նեխում են: Սովորաբար այն բոլոր հողերում, որտեղ ստացվում է ցորենի լավ բերք, առվույտը հաջողությամբ կարող է աճել, միայն թե առվույտի համար հողի ռեակցիայի խնդիրը ավելի կարևոր է, քան ցորենի համար, որովհետև ցորենը ավելի քիչ է տուժում հողի թթվութունից, իսկ առվույտը՝ ընդհակառակը: Առվույտը մեծ պահանջ ունի հողում եղած ֆոսֆորի և կրի նկատմամբ. այդ պահանջը, հատկապես կրի նկատմամբ, բխում է ոչ միայն նրանից, որ առվույտը մեծ քանակությամբ կիր է յուրացնում, այլ նաև նրանից, որ կրի առկայությամբ հողի թթվութունը չեղոքանում է:

Ճիշտ չի լինի կարծել, որ առվույտը պահանջկոտ չէ հողում եղած սննդանյութերի նկատմամբ. ընդհակառակը, որքան վարելաչեղարը և հատկապես ենթաշերտը հարուստ է սննդանյութերով, այնքան առվույտը բարձր բերք է տալիս: Ջրովի պայմաններում առվույտը կարող է աճել համարյա բոլոր հողերում՝ անկախ վարելաշերտի հզորութունից և հողի տեսակից: Ինչ վերաբերում է աղուտներին, պետք է ասել, որ առվույտը ոչ միայն կարողանում է տանել հողի թույլ աղիութունը, այլ հանդիսանում է այն միջոցներից մեկը, որով մենք պայքարում ենք աղակալման դեմ:

**ԱՌՎՈՒՅՑԻ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՌԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ՎԵՃԱԿԻ ՎՐԱ**

Հայտնի է, որ առվույտը բավականին զարգացած խոր արմատներ ունի, որոնց փոստմիջ հողում կուտակվում է բավականաչափ չոր մասսա: Այսպես օրինակ. Ուզգեհկտանում առվույտի դաշտում չոր նյութերի կուտակումը հողում հետևյալ ձևով է արտահայտվում (տես աղյուսակ № 1):

Աղյուսակ № 1

0—25 սմ վարելաչերտում առվույտի կուտակված չոր մասսայի կշիռը ըստ տարիների ց հեկտ.

№ №	Առվույտի ցանքը ըստ տարում է վարված	Չոր մասսայի կշիռը ց հեկտարում	Որից ազոտ ց հեկտարում
1	2-րդ տարում	31,68	0,59
2	3-րդ տարում	61,26	1,26
3	4-րդ տարում	39,82	1,11
4	6-րդ տարում	28,99	0,53

Թվերը ցույց են տալիս, որ առվույտի դաշտում տարբեր տարիներում տարբեր քանակությամբ չոր նյութեր են կուտակվում, մաքսիմում կուտակումը տեղի է ունենում ցանքի երրորդ տարում, որից հետո ըստ տարիների չոր նյութերի քանակը աստիճանաբար պակասում է և, վերջապես, ցանքի 6-րդ տարում նա ավելի քիչ է, քան ցանքի 2-րդ տարում:

Այն դաշտը, որը վարվել է առվույտի ցանքի 3-րդ տարում, 0—25 սմ վարելաչերտում պարունակել է 1,26 ց հեկտար ազոտ, իսկ 4-րդ տարում վարված դաշտը՝ 1,11 ց հեկտար, 6-րդ տարում ավելի քիչ, քան նույնիսկ 3-րդ տարում: Եզրակացությունը պետք է լինի այն, որ առվույտը 2—3 տարի միևնույն տեղում մշակելիս փոխում է հողի քիմիական կազմը, վարելաչերտում կուտակում է մեծ քանակությամբ ազոտ: Ըստ ակադեմիկոս Պրյանիշնիկովի, 200 հազար հեկտար ջրովի առվույտի դաշտում կուտակվում է այնքան ազոտ, որքան մեկ տարվա ընթացքում կարող է արտադրել ամենախոշոր քիմիոսինթետը:

Իսկ այդ, առվույտը, շնորհիվ իր խորը թափանցող արմատների, մեծ քանակությամբ հանքային աղեր է բարձրացնում

ենթաշերտից, որի մի մասը, բնականաբար, արմատներն հետ միասին մնում է վարելաշերտում:

Երկու խոսք էլ աղուտ հողերում առվույտի մշակման մասին:

Հայտնի է, որ մեզ մոտ, Արարատյան դաշտում բավականին մեծ տարածությամբ աղուտ (շուռքյաթ) հողեր կան, որոնց իրացումը օրակարգի խնդիր է դարձել: Հիմնական մեկտրատիվ միջոցառումներից հետո առաջին կուլտուրան, որը պետք է ցան-վի այդ հողերում ըստ ամերիկացի հետազոտողների—դա առ-վույտն է, որովհետև ըստ բազմաթիվ հետազոտողների՝

1. Առվույտը իր առատ մաշտայի հետ միասին բավականին մեծ քանակությամբ աղ է հեռացնում հողից:

2. Գարնանից սկսած մինչև ուշ աշուն անընդհատ աճելու հետևանքով, առվույտը դաշտի հողը պահում է ստվերի տակ: Այդ բանի շնորհիվ հողի մակերեսից ջրի գոլորշիացումը պակասում է, հետևապես պահանջում է նաև աղերի բարձրացումը դեպի վարելաշերտը:

3. Առվույտը հայտնի է որպես շատ ջրասեր կուլտուրա, որի համար էլ ուժեղ չափով չորացնում է հողի այն շերտը, որտեղ տարածված է արմատների հիմնական մասը. հետևապես նա դադարեցնում է ստորերկրյա ջրերի կապիլյար բարձրացումը դեպի վարելաշերտը, որի հետևանքով էլ չեն բարձրանում նաև աղերը:

4. Հայտնի է, որ առվույտը ունի ուժեղ զարգացած իլեկաձև արմատներ: Առվույտի տեղը վարելուց հետո, այդ իլեկաձև, հիմնականում ուղղահայաց ձևով աճած արմատները, քայքայվում են, թողնելով ուղղահայաց անցքեր դեպի հողի ենթաշերտը: Հետագայում ջրերու ժամանակ կամ տեղումներից առաջացած ջրերը ցած իջնելով այդ անցքերից աղերն իջեցնում են դեպի ենթաշերտը, երբեմն հասցնում են այն մինչև ստորերկրյա ջրերը: Այս բոլորի հետևանքով աղուտ հողերում աղի քանակը աստիճանաբար պակասում է:

Այս բոլորից հետո այժմ պետք է լուծենք մի խնդիր. արդյո՞ք առվույտը փոխում է հողի ֆիզիկական զբոսթյունը, թե ոչ: Ինչպես ասացինք, առվույտը մեծ քանակությամբ չոր մասսա է կուտակում հողում, հետևապես փոխում է նաև հողի ֆերտի-

ցիանները հօգուտ կնձիկների ստեղծման, հօգուտ մասնիկների խոշորացման, ուրիշ խոսքով՝ նպաստում է հողում կնձկային ստրուկտուրայի ստեղծմանը:

Բացի այդ, ապացուցված է, որ առվույտից հետո հողն ուժեղ չի կեղևակալում, ինչպես այդ կատարվում է ամեն տարի վարվող հողերում: Սակայն առվույտը հիմնականում փոխում է հողի քիմիական կազմը, իսկ հողի ֆիզիկական վիճակի վրա նրա ազդեցությունը կատարվում է կողմնակիորեն:

Որպեսզի հասնենք այն նպատակին, որ առվույտը ոչ միայն փոխի հողի քիմիական դրուժյունը, այլ նույն չափով փոխի և հողի ֆիզիկական դրուժյունը, անհրաժեշտ է դիմել առվույտի կոմպլեքս ցանցին, այսինքն՝ առվույտը ցանել հացադաշտներին պատկանող մի որևէ բազմամյա բույսի, օրինակ ժիռնյակի կամ մի այլ նույնանման կերարույսի հետ: Այս դեպքում ժիռնյակը, որպես փնջած կարթամ զարգացող արմատներ ունեցող բազմամյա բույս, հողի վարելաշերտում ստեղծում է հողի կնձիկներ, իսկ առվույտը իր իլիկածն արմատներով միջոցով հողի ենթաշերտից բարձրացնում է մեծ քանակությամբ կիր, որով այդ մասնիկներին տալիս է ամրություն ու կայունություն:

ԱՌՎՈՒՅՏԻ ԵՐԿԱՐԱԿՆՑՈՒԹՅՈՒՆՆԸ

Վերը նշեցինք, որ առվույտը բազմամյա բույս է, սակայն նրա արտադրողականությունը տարբեր է ցանքի տարբեր տարիներում: Առվույտի միևնույն տեղում համեմատաբար ավելի շատ տարիներ բերք տալը, կամ ինչպես ասում են՝ առվույտի երկարակեցությունը կախված է մի շարք պայմաններից, այն է՝

ա) Կլիմայից. տաք, ջրովի պայմաններում առվույտն ավելի երկար է մնում միևնույն տեղում և ավելի երկար տարիներ է նորմալ բերք տալիս, քան ցուրտ ու անջրդի ջրջաններում: Մեծ ձյան շերտ ունեցող շրջաններում նա ավելի երկար է մնում, քան սակավաձյուն շրջաններում:

բ) Հողից. սևահողերում առվույտը ավելի երկար է մնում, քան ավազային հողերում: Գոմաղբով կամ հանքային պարար-



տանյութերով պարարտացրած հողերում ավելի երկար է մնում, քան չպարարտացրած հողերում:

զ) Խնամքից վատ խնամված և մոլախոտերով վարակված դաշտում նա ավելի կարճ ժամանակ է մնում, քան լավ խնամքի դեպքում:

դ) Քաղի ժամանակից ու քանակից, երբ առվույտը հնձվում է ժամանակից շուտ՝ դեռևս չկոկոնակված շրջանում, ավելի կարճ ժամանակ է մնում, քան այն դեպքում, երբ քաղը կատարվում է ժամանակին, այն է՝ լրիվ կոկոնակված շրջանում: Պարզված է նաև այն, որ հաճախակի քաղը բացասական է ազդում առվույտի երկարակեցության վրա: Թե քանի տարի առվույտը պետք է թողնել միևնույն տեղում, — այդ կախված է ցանքաշրջանառության տիպից: օրինակ՝ խոտադաշտային ցանքաշրջանառության մեջ առվույտը պետք է օգտագործել միայն երկու տարի:

ԱՌՎՈՒՅՑԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Առվույտը տալիս է բավականին մեծ քանակությամբ բերք, սակայն նրա քանակը տարբեր է տարբեր կլիմայական պայմաններում: Այսպես օրինակ՝ Միջին Ասիայում առվույտը տալիս է մինչև 100 ցենտներ չոր խոտ, իսկ մեղ մոտ, Արարատյան դաշտի պայմաններում միջին բերքը կազմում է 70—80 ցենտներ, Նախալեռնային շրջաններում՝ 40—50 ցենտներ, իսկ լեռնային շրջաններում՝ ընդամենը 25—30 ցենտներ չոր խոտ: Բերքի քանակը կախում ունի ագրոտիկիկական միջոցառումների ճիշտ կիրառումից և սորոսից: Բերքը թե՛ ռբակի և թե՛ քանակի տեսակետից տարբեր է տարբեր հարի ժամանակ:

Առաջին հարը քանակով շատ է լինում, քան թե 2-րդ, 3-րդ և մյուս հարերը, սակայն միշտ էլ վարակված է լինում մոլախոտերով, որոնք զգալիորեն պակասեցնում են խոտի սննդարարությունը:

Երկրորդ հարի ժամանակ մոլախոտերի քանակը չափազանց քիչ է լինում: Արարատյան դաշտի պայմաններում բացի դանդուրդանից ու կպլուկներից, ուրիշ մոլախոտեր այդ հարի

ժամանակ դրեթե չեն լինում, հետևապես որակի տեսակետից ավելի արժեքավոր խոտ է ստացվում:

Բերքի քանակը նույնպես տարբեր է լինում տարբեր տարիներում. ցանքի առաջին տարում բերքը ավելի քիչ է լինում, քան 2-րդ տարում: Մաքսիմում բերք ստացվում է ցանքի 3-րդ տարում:

ԱՌՎՈՒՅՑՏԻ ՏԵՂԸ ՅԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Որովեսզի որոշենք առվույտի տեղը ցանքաշրջանառության մեջ, այն պետք է բխեցնենք հետևյալ խնդիրներից՝

ա) առվույտը ինչպիսի նախորդ է,

բ) որ բույսերը կարող են լինել առվույտի նախորդներ,

գ) քանի տարի հնարավոր է պահել առվույտը միևնույն տեղում:

ա) Առվույտը որպես նախորդ մեզ արդեն հայտնի եղավ, երբ խոտում էինք նրա բիոլոգիական առանձնահատկությունները մասին: Մենք տեսնք, որ առվույտի ցանքը դրական է ազդում հողի թե քիմիական և թե ֆիզիկական վիճակի վրա: Բացի այդ, տեսնք նաև, որ առվույտը հաջողությամբ պայքարում է մոլախոտերի դեմ: Այժմ անհրաժեշտ է պարզել, թե առվույտի ստեղծած պայմանները արդյոք բոլոր կուլտուրաների համար կարող են նպաստավոր լինել, թե ոչ: Այդ հարցին պատասխանելիս նկատի պետք է ունենալ, որ կան կուլտուրական բույսեր (օրինակ ծխախոտը, շաքարի ճակնդեղը և այլն), որոնց որակական հատկանիշների վրա հողում առվույտի կուտակած ազոտական միակողմանի առատ սննդանյութերը երբեմն կարող են բացասական անդրադարձնալ և որոնց մեջ ցանկալի չէ, որ ավելորդ քանակությամբ սպիտակուցային նյութեր կուտակվեն: Կան բույսեր էլ, որոնց համար նշված այդ պայմանները բացասական ոչ մի դեր չեն խաղում, օրինակ՝ բամբակենու նկատմամբ Հետազոտողների կողմից, լինչպես և արտադրությունում աշխատողների կողմից ապացուցված է, որ առվույտն իր բիոլոգիական առանձնահատկություններով հողում ստեղծած պայմանների շնորհիվ հանդիսանում է ամենալավ նախորդը բամբակենու համար:

բ) Թի որոնք կարող են լինել առվույտի նախորդները

մեր պայմաններում ջրովի հողերում — այդ միանգամայն միևնույն է: Գյուղատնտեսական բոլոր կուլտուրաներն էլ նույնանման հաջողությամբ կարող են հանդիսանալ առվույտի նստորդ:

գ) Առվույտի երկարակեցության խնդիրը լուծելիս տեսանք, որ հողի քիմիական ու ֆիզիկական դրության վրա առվույտի թողած ազդեցության և տարրեր տարիների բերքատվության տեսակետից նպատակահարմար է առվույտը օգտագործել 2 տարի, չհաշված ցանքի առաջին տարին: Այդ առկայեցված է նաև իրեն հաջորդող կուլտուրայի (բամբակի) բերքատվության վրա ազդելու տեսակետից:

Այս բոլորը նկատի ունենալով բամբակացան կոլտնտեսության թյուններում կիրառվում է հետևյալ տիպի ութդաշտյան ցանքաշրջանառություն՝

1-ի տարին բամբակ	5-րդ տարին զարնանացան
2-րդ » բամբակ	6-րդ » աշնանացան ցորեն + առվույտ
3-րդ » բամբակ	7-րդ » առվույտ
4-րդ » բամբակ	8-րդ » առվույտ

ԱՌՎՈՒՅՏԻ ԴԱՇՏԻ ՄՇԱԿՈՒԹՈՒՆԸ

Գյուղատնտեսական տարրեր կուլտուրաների մշակության համար չկա մի ընդհանուր խիստ սահմանված տրաֆարետ: Նրա մշակման յուրաքանչյուր միջոցառում բխում է տվյալ կուլտուրայի, կոնկրետ դեպքում, առվույտի բիրյուզիական առանձնահատկություններից, մշակման մասսիվի հողային պայմաններից ու ցանքի նպատակից: Այդ պատճառով էլ առվույտի դաշտի մշակման ժամանակ պետք է նկատի ունենանք հետևյալ հանգամանքները:

1. Առվույտի ծիւրերը սկզբնական շրջանում չափազանց թույլ են, նրանք պահանջում են, որ հողը փխրուն լինի ու հողի մակերեսը հարթ. անա թե ինչու մշակման գործը պետք է կադմակերպել ախպես, որ հողի վարելաշերտում լինի անհրաժեշտ քանակությամբ խոնավություն:

2. Առվույտը սկզբնական շրջանում ուժեղ չափով զարգանում է իբր իլիկածն խորը թափանցող արմատային սիստեմը. հետևապես պահանջվում է, որ հողը լինի օդաթափանց, իսկ դա

նուշնայես կախումն ունի նրանից, թե ինչպես է մշակվում տըվ-
յալ դաշտը:

3. Հողի մշակման ժամանակ պետք է նկատի ունենալ այն
հանգամանքը, որ մենք գործ ունենք այնպիսի կուլտուրայի
հետ, որը մի քանի տարի մնալու է նույն տեղում և որ հողի
վատ նախապատրաստումն անդրադառնալու է ոչ միայն մեկ
տարվա բերքատվության վրա, այլ մի քանի տարվա: Հետևա-
պես, պետք է հողի նախապատրաստումը կատարել այնպես, որ
տնտեսությունը մի քանի տարի շարունակ ապահովվի առվույ-
տի առատ բերքով:

4. Հայտնի է նաև այն, որ առվույտը ցանվում է որևէ
կուլտուրայի հետ միասին, ուրիշ խոտքով՝ ցանվում է որպես
ենթացանք: Այդ նշանակում է, որ հողի մշակումը պետք է տեղի
ունենա այն ուղղությամբ, որ իր ստեղծած պայմաններով բա-
վարարի նաև առվույտին ծածկոց հանդիսացող մի այլ կուլտու-
րային, սովյալ գեպքում որևէ հացարույսին:

Այս բոլորից ելնելով անպայման պետք է կատարել աշնա-
նային խոր վար, որովհետև աշնան վարը նպաստում է մեծ քա-
նակությամբ խոնավություն կուտակելուն, և հողը փխրուն է լի-
նում: Գարնանը ցանվող առվույտի հողը վարում են աշնանից:
Եթե այդ դաշտում նախորդը հանդիսանում է հացահատիկային
որևէ կուլտուրա, հունձը կատարելուց հետո անմիջապես արվում
է երեսվար: Դաշտը այդ վիճակում թողնում են ու աշնանը կա-
տարում հիմնական խոր վար: Վաղ գարնանը, եթե այդտեղ
պետք է ցանվի որևէ մի հացահատիկային կուլտուրա որպես
ծածկոց, սովյալ գեպքում գարնանացան ցորեն կամ գարի,
կրկնավարից հետո շարքացանով ցանում են այդ կուլտուրան
ու հողի մակերեսը հարթում: Իսկ եթե ծածկոց հանդիսացող
կուլտուրան աշնանացան ցորեն է, ապա աշնանացան ցորենը
ցանելուց հետո հողի մակերեսը հարթեցնում են ու այդ վիճա-
կում թողնում մինչև գարուն:

ՊԱՐԱՐՍԱՅՈՒՄԸ

Առվույտը, ինչպես տեսանք, հանդիսանում է հողը հարստաց-
նող, հողի քիմիական ու ֆիզիկական վիճակը հիմնական

բարեկամող կուլտուրա, սակայն այդ դեռ չի նշանակում, որ առվույտը մշակելիս չպետք է մտահոգվինք տվյալ դաշտի պարարտացման խնդրով: Այդ խնդիրը ճիշտ ձևով լուծելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առվույտը բավականին մեծ քանակությամբ սննդանյութեր է հեռացնում հողից (տես աղ. № 2.):

Աղյուսակ № 2

Տարբեր կուլտուրաների վերցրած սննդանյութերի քանակը կիլոգրամներով (ըստ Պարարտացման Համափուլական գիտահետազոտական ինստիտուտի տվյալների)

Կուլտուրա	Միջին բերքի քանակը	Ցանում է իր հետ սննդանյութեր կիլոգրամներով՝ մեկ հեկտարից			
		Ազոտ	Փոսֆոր	Կալիում	Կալցիում
Առվույտ	100 ց.	260,0	65,0	150,0	252,0
Յորին	25 ց. հատիկ և 60 ց. դարձան	104,5	33,5	66,5	16,5
Ոլոբ	20 ց.	115,0	30,5	40,0	56,5
Ծրեքնուկ	60 ց.	118,0	33,6	90,0	141,0

Ինչպես տեսնում ենք, այս թվերը ցույց են տալիս, որ առվույտը անկախ նրանից, որ իր բիոլոգիական առանձնահատկությունների հետևանքով կարողանում է օդի ազատ ազոտը կապել հողի հետ, որ նա իր արժատային լայն ցանցի միջոցով կարողանում է հողի խոր շերտերի սննդանյութերից օգտվել, այնուամենայնիվ իր առատ բերքի հետ հողից տանում է բավականին մեծ քանակությամբ ազոտային և այլ սննդանյութեր, որի պատճառով էլ, բարձր բերք ապահովելու համար, անհրաժեշտ է դաշտը պարարտացնել:

Եթե համեմատելու լինենք առվույտի ու ցորենի սպառած սննդանյութերի քանակը, ապա կտեսնենք, որ առվույտը երկու անգամ ավելի շատ ազոտ է վերցնում, քան ցորենը, և նույնպես երկու անգամ ավելի շատ ֆոսֆոր է յուրացնում: Կալիումի

և կալցիումի վերաբերյալ թվերը նույնն են ասում: Ահա թե ինչու Միջին-Ասիական ռեսպուբլիկաներում կատարված վերին աստիճանի ուսանելի փորձերն ապացուցում են, որ պարարտանյութերը բարձրացնում են առվույտի բերքատվությունը: Ստորին բերում ենք Թուրքմենստանում կատարված փորձի արդյունքները (տես աղյուսակ № 3):

Աղյուսակ № 3

Առվույտի մեկ հեկտարի բերք (3 հարր միասին)

կոնտրոլ	Փոսֆորական պարարտանյութերով պարարտացնելիս	Դոմադրով պարարտացնելիս
29,6 ց.	101,3 ց.	112,5 ց.

Այս արդյունքները կրկին անգամ ապացուցում են, որ անհրաժեշտ է առվույտի դաշտը պարարտացնել: Մնում է մեղ միայն լուծել, թե երբ պետք է այդ պարարտանյութերը հողի մեջ մտցնել: Պարարտանյութերի մի մասը հողի մեջ մտցվում է մինչև ցանքը, և ցանքից 10 օր առաջ, իսկ մյուս մասը կարելի է մտցնել կամ վաղ դարնանը, կամ յուրաքանչյուր հարից հետո:

Ցանկ.—Առվույտի ցանքը կարելի է կատարել թե՛ ծածկուցով և թե՛ առանց ծածկուցի: Հետադոտողները այս տեսակետից իրենց հայացքներով բաժանվում են երկու խմբի, որոնցից առաջինները պահանջում են առանց ծածկուցի ցանել: Առաջին խումբը հետադոտողները, ուրիշ խոսքով՝ մաքուր ցանքի կողմնակիցներն իրենց տեսակետները հիմնավորում են հետևյալ կերպ՝

1. հողում եղած խոնավությունը չի կարող երբեք բավարարել առվույտի և ծածկուց հանդիսացող, տվյալ դեպքում ցորենի պահանջները, որի պատճառով էլ թե՛ առվույտի, թե՛ ցորենի բերքը միշտ էլ կլինի ցածր,

2. առվույտը, աճելով ծածկուցի ստվերի տակ և զուրկ լինելով արևի ճառագայթներից՝ զարգանում է թույլ ու հետազայում էլ 2-րդ, 3-րդ և հետագա տարիներին ավելի քիչ բերք է տալիս, քան այն դեպքում, երբ նա ցանված է լինում մաքուր,

3. հողում եղած աննպաստությունները ծածկողի դեպքում հենքավարարում երկու կուլտուրայի պահանջները:

Երկրորդ խումբ հետադուրողները, այն է՝ ծածկոցին կողմնակիցներն ապացուցում են իրենց տեսակետը հետևյալ կերպ՝

1. Հայտնի է, որ առվույտը, որպես ըագմածյա կուլտուրա, առաջին տարին բերք քիչ է տալիս, և որպեսզի հողի նորմալ բերքից այդ տարին չզրկվենք, անհրաժեշտ է, որ տվյալ դաշտում ցանված լինի մի որևէ միամյա կուլտուրա, տվյալ դեպքում ցորեն, որով ապահովվում է տվյալ դաշտի այդ տարվա բերքը:

2. Ծածկոցի կողմնակիցները խոնավության խնդրին մոտենալիս քիչ ուշադրություն են դարձնում այդ հանգամանքի վրա, նկատի ունենալով, որ հատկապես մեղ մոտ առվույտը մշակվում է միայն ջրովի հողերում, հետևապես երկու կուլտուրաների համար էլ ջրի պահանջը բավարարվում է արհեստական ոռոգման միջոցով:

3. Եթե խնդրին մոտենալու լինենք ստվերի տեսակետից, այն է՝ որ ծածկոց հանդիսացող կուլտուրան ստվերի տակ է թողնում առվույտին, ապա տեսնում ենք, որ մաքուր ցանքի դեպքում էլ, գոնե մեր պայմաններում, այնքան շատ մոլախոտեր են դարգանում, որոնք ավելի շատ ստվեր են թողնում, և առվույտը ավելի շատ է տուժում, քան այն դեպքում, եթե դա գտնվում է ցորենի տակ:

4. Եվ վերջապես այդ խնդիրը ճիշտ լուծելու համար պետք է համեմատության մեջ դնել ծածկոցով և առանց ծածկոցի ցանված առվույտի բերքը ոչ միայն առաջին տարում, այլև ամբողջ երեք տարում: Այս տեսակետից տեսնում ենք, որ երկրորդ և երրորդ տարիներին առվույտի երկու ցանքերի մեջ բերքատվության տեսակետից գրեթե տարբերություն չկա: Եթե այդ այդպես է, ապա պետք է թողնենք, որ ինքը տնտեսությունը լուծի ցանքի ձևը: Եթե տնտեսության համար նպատակահարմար է ստանալ 25—30 ցենտներ ցորենի հատիկ, 60—70 ցենտներ դարման, պետք է անպայման խնդիրը լուծել հողատ ծածկոցի:

Կոնկրետ մեզ մոտ, Արարատյան դաշտի պայմաններում առվույտը մաքուր ցանիլը նշանակում է կոլտնտեսականներին

զրկել ցանքաշրջանառության սխտեմում հացահատիկներին հատկացված միակ դաշտից: Այդ նշանակում է, որ Արարատյան դաշտում ցանքաշրջանառության սխտեմում միակ դաշտը, որտեղ կարելի է ցանել աշնանացան ցորեն, վերացնել ամբողջությամբ: Այդպիսի հարցադրումը, ինչպես տեսնում ենք, սխալ է: Եզրակացությունը պետք է լինի այն, որ մեր պայմաններում, ինչպիսի նպատակների համար էլ որ կատարված լինի ցանքը՝ խոտի, թե սերմի, այդ միանգամայն միեւնույն է, պետք է անպայման կատարվի ծածկոցով: Հակառակ դեպքում առաջին տարին զրկվում ենք հացի բերքից:

Այժմ հարց է ծագում, թե ո՞րը պետք է լինի ծածկոց հանդիսացող կուլտուրան: Այդ խնդիրը լուծելու համար պետք է նկատի ունենանք հետևյալ հանգամանքը.

1. տվյալ կուլտուրան իր վեգետացիայի տեսակետից պիտի լինի համեմատաբար վաղահաս, ուրիշ խոտքով՝ դաշտը շուտ ազատի ծածկոցից:

2. Ծածկոցի խնդիրը լուծելիս, պետք է վերցնել աշնանացաններից այնպիսի սորտեր, որոնք չեն պառկում, որովհետեւ պառկելու դեպքում ուժեղ չափով ազդում են առվույտի վրա: Եզրակացությունը պետք է լինի այն, որ ծածկոց հանդիսացող կուլտուրան պետք է լինի նախ և առաջ աշնանացան ցորենը, որովհետեւ նա 10—15 օր շուտ է ազատում դաշտը: Փարսնահացանների դեպքում պետք է վերցնել փարսնացան դարձնները:

ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԵՏՐԱՍՏՈՒՄԸ

Առվույտի սերմերը շատ մանր են, դեղին գույնի և որոշ փայլով: Սերմի նախապատրաստման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որ սերմը իր որակական հատկանիշներով բավարարի մեր պահանջները, այն է՝

1. ունենա բարձր ծլունակություն և

2. չպարունակի ոչ մի հատիկ գայլուկի սերմ:

Սկզբնորում թույլ էին տալիս, որ մեկ կելոգրամ առվույտ

աթի սերմի մեջ լինի գալուէի մինչև 8 սերմ. այդ նշանակում է, որ առվույտի դաշտում արհեստականորեն ստեղծենք գալուէի բաղմամբիվ օջախներ, որով և արհեստականորեն վարակենք առվույտի դաշտը: Այժմ այդ խնդրի վրա բավականին մեծ ուշադրութիւն են դարձնում: Եթե տվյալ առվույտի սերմի մեջ կան գալուէի սերմեր, ապա անհրաժեշտ է կուակուտա գտող մեքենաների միջոցով դուել այնքան անդամ, մինչև որ ոչ մի հատիկ գալուէի սերմ չմնա սերմի մեջ: Դրա հետ միասին պետք է ուշադրութիւն դարձնել, որ առվույտի սերմին խառնված չլինեն մոլախոտերի սերմեր, օրինակ՝ դանդուղաճի, հավակատարի, կպչուէի, չաիրի և այլ մոլախոտերի սերմեր:

ՅԱՆՔԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Առվույտի ցանքի խտութիւնը կամ ուրիշ խոսքով՝ սերմի քանակը կախված է մի շարք պայմաններից՝

1. Կլիմայական-հողային պայմաններից.
2. Դաշտը մոլախոտերով վարակված լինելու աստիճանից.
3. Սերմի որակից.
4. Հողի մշակութից.
5. Մտացվող խոտի որակից:

Այդ պայմաններից ելնելով պետք է որոշել մեկ հեկտարում ցանվող սերմի քանակը: Յուրաքանչյուր կիլոգրամ առվույտի սերմը պարունակում է 485.000 սերմ: Եթե մի հեկտարին ցանելու լինենք ընդամենը մեկ կիլոգրամ սերմ, ապա յուրաքանչյուր քառակուսի մետրին ընկնում է 48 սերմ: Նորմալ խտութիւն ունեցող առվույտի դաշտերում մեկ քառակուսի մետրի վրա աճում է մինչև 200 բույս: Այստեղից պարզ երևում է, որ եթե հողերը լինեն կուլտուրական վիճակում և մոլախոտերից ազատ, ապա բավական է ցանել 4—5 կգ սերմ, որպեսզի ստացվի նորմալ ցանք: Սակայն նկատի ունենալով, որ մեր դաշտերում մոլախոտերի քանակը հաճախ ահռելի թվերի է հասնում, որ հողի մշակումը չի կատարվում այնպես, որ ստեղծվի բոլորովին հարթ մակերես, ապա ցանվող սերմի քանակը պետք է վերցնել շատ ավելին, քան անհրաժեշտ է:

Մյուս կողմից՝ խոտի որակը կախված է ցանքի վիճակից.

նոր ցանքի դեպքում ստացվում է կոպիտ էեր, ուստի այդ բացը վերացնելու նպատակով մենք վերցնում ենք ավելի շատ սերմ, քան անհրաժեշտ է։ Այսպես օրինակ՝ մեր կոլտնտեսականները մեկ հեկտարին վերցնում են 12—15 կգ առվույտի սերմ, իսկ շատ հաճախ էլ՝ 20—24 կգ։ Սա սխալ է և շուտյուրեթյուն։ Նորմալ և լավորակ բերք ստանալու համար 12 կգ սերմը լի ու լի բավական է։ Այն դեպքում, երբ դաշտերում մոլախոտերի քանակը մինիմումի կհասցվի, երբ մեր հողերը կուլտուրական վիճակի կբերվեն, այն ժամանակ սերմի քանակն էլ ավելի կիջեցվի։

ՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Առվույտի ցանքի ձիշտ ժամկետը որոշելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ՝

1. առվույտի մատղաշ ծիլերը շատ արագ ցրտահարվում են,
2. առվույտի ցանքը ու նրա ժամկետը խիստ պայմանավորված պետք է լինի ծածկոց հանդիսացող կուլտուրայի ցանքի ժամկետով։

Առվույտը կարելի է ցանել և՛ դարնանը, և՛ աշնանը, և՛ ամռանը, նայած շրջանի բնական պայմաններին և ցանքի նպատակին։ Այսպես, օրինակ, աշնանը կարելի է ցանել այն շրջաններում և այն մասսիվներում, որտեղ ձմեռը մեղմ է և ձյան շերտը հաստ։ Արդյոք հնարավոր է մեկ մոտ Արարատյան դաշտում առվույտն աշնանը ցանել, թե ոչ։ Արարատյան դաշտում աշնանացան ցորենները ցանվում են հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին։ Այդ ժամանակ ցանված առվույտն ի վիճակի չէ մինչև ձմռանը աճել ու զարգանալ այն աստիճանի, որ կարողանա դիմանալ ձմռան սառնամանիքներին։

Ձմեռն Արարատյան դաշտում հաճախ ձյուն չի դալիս, ցանքը ծածկված չի լինում ձյան շերտով, որի պատճառով էլ աշնանը ցանված առվույտը ցրտահարվում է։ Եթե Արարատյան դաշտում այս կամ այն պատճառով որոշվում է առվույտը ցանել աշնանը, ապա պիտք է այդ ցանքը կատարել օգոստոս ամսին, որպեսզի նման ցանքի դեպքում առվույտը կարողանա զարգանալ այն աստիճանի, որ դիմանա ձմռան ցրտերին։ Սակայն օգոստոսին կատարված ցանքի դեպքում հնարավոր չէ օգ-

տագործել ծածկոցը. ստացվում է մաքուր ցանք, որովհետև այդ նույն շրջաններում աշնանացանները ցանվում են ոչ թե օգոստոսին, այլ հոկտեմբերին-նոյեմբերին: Իսկ մենք քիչ հետո կտեսնենք, որ ծածկոց հանդիսացող կուլտուրաները միշտ էլ պետք է առաջին հերթին ցանել, հետո նոր ենթացանք հանդիսացող առվույտը:

Եղբակացությունն այն է, որ Արարատյան դաշտում առվույտները աշնանը հեն ցանվում: Մեր պայմաններում որոշ նախալեռնային շրջանների ցածրագիր վայրերում, ձորերում հնարավոր է առվույտը ցանել աշնանը, որովհետև այստեղ ձմեռը մեղմ է լինում և դաշտը ձյունապատ, առվույտն էլ մինչ ցրտերը կանոնավոր դարգանում է:

Առվույտի ցանքի հիմնական ժամկետը դարունն է: Գարնանն առվույտի ցանքը կատարվում է՝ հենց որ հնարավորություն է լինում առաջին անգամ դաշտ դուրս գալ:

Եթե ծածկոց հանդիսացող կուլտուրան որևէ հացահատիկ է (գարնանացան), ապա առվույտի ցանքը կատարվում է այն ժամանակ, երբ սվլալ հացահատիկն է ցանվում՝ նույն օրում, կամ մեկ օր հետո: Իսկ եթե ծածկոց հանդիսացող կուլտուրան աշնանացան ցորեն է, ապա առվույտի ցանքը պետք է կատարել վաղ գարնանը, քանի որ ուշացնելու դեպքում աշնանացանները սկսում են ուժեղ աճել ու այլևս հնարավոր չի լինում առվույտի ցանք կատարել: Գարնանը առվույտի ցանքը պետք է կատարել վաղ նաև այն պատճառով, որ հողում եղած խոնավութենը բավականացնի նրան ծլելու առանց արհեստական ոռոգման:

ՅԱՆՔԻ ԽՈՐՈԹՅՈՒՆԸ

Առվույտի սերմերը շատ մանր են, ծիւերը նուրբ են ու չեն կարողանում հաղթահարել հողի մեծ շերտ. այս տեսակետից էլ առվույտը անհրաժեշտ է ցանել 0—1,5 սմ խորությամբ: Որոշ շրջաններում, այն դեպքում, երբ առվույտը շաղաքան են կատարում, բավականանում են սերմը հողի երեսին շաղ տալով և ծառի ճյուղերից պատրաստած ցականով ցականելով կամ խնչպես կոյտատեսականներն են ասում՝ «չլիում են»: Մեկ և կես սան-

տիմեաբերից խորը ցանկելու դեպքում առվույտի սերմերը չեն ծը-
լում: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ
այնքան շատ սերմ ցանկելու պայմաններում առվույտի դաշտե-
րում ցանքը հազիվ նորմալ խտություն է ունենում, որովհետեւ
ծլում են առվույտի միայն այն սերմերը, որոնք հողում մեկ
և կես սանտիմետրից ավելի խոր չեն, իսկ մնացած բոլոր սերմե-
րը, որոնք մեկ և կես սանտիմետրից ավելի խորն են լինում, չեն
ծլում:

ԱՌՎՈՒՅՏԻ ԻՆՈՎՈՒՂՅՈՒՆ

Մենք ծանոթացանք առվույտի այն բիոլոգիական առանձ-
նահատկության հետ, որի շնորհիվ բակտերիաների միջոցով
հողը կարողանում է հարստանալ ազոտով: Որպեսզի այդ հա-
րստացումը ցանքի առաջին տարվանից ինտենսիվորեն կա-
տարվի, անհրաժեշտ է, որ հողում լինի մեծ քանակությամբ
պլաշարաբակտերիաներ: Ապացուցված է, որ այդ բակտերիաները
հողի մեջ կարելի է մտցնել սերմերի հետ միասին: Առվույտի
նիտրագինը լուծում են ջրի մեջ, այդ հեղուկով թրջում
մեկ հեկտարի համար որոշված սերմացուն, տվյալ դեպքում
10—12 կգ, լավ խառնում են մինչև որ բոլոր սերմերը թոցա-
նան: Այդ վիճակում թողնում են մի օրեւ տեղ չորանալու,
որից հետո կատարում են ցանքը, այսպիսի ցանքի դեպքում
առվույտի բերքը բարձրանում է ոչ միայն առաջին տարում,
այլև երկրորդ, երրորդ և հետագա տարիներին: Նկատված է նաև,
որ նիտրոգինով վարակելու դեպքում խոտի օրակն էլ լավանում
է, մեծանում է սպիտակուցային նյութերի տոկոսը:

ՅԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

Առվույտը կարելի է ցանել՝

1. Մաքուր.

2. Ծածկոցի տակ որպես նթացանք.

3. Ծածկոցի տակ որպես կոմպլեքս ցանք:

Մաքուր ցանքի տեխնիկան շատ պարզ է. դաշտը նախա-
պատրաստելուց ու հողի մակերեսը հարթելուց, սերմի նա-
խապատրաստման հետ կապված գործողությունները կատարե-

լուց և շարքացանը կանոնավորելուց հետո ցանում են առվույտը։ Այստեղ միայն մեկ հանգամանքի վրա պետք է ուշադրութուն դարձնել, այդ այն է, որ մեկ մոտ գործադրվող սովորական շարքացանները միջշարքային տարածությունները (10—15 սմ) մեծ են. այդ պատճառով ստացվում է առվույտի բավական կոպիտ կեր ու ստացված խոտի որակն էլ լինում է ցածր։ Ահա թե ինչու պետք է նախօրոք շարքացանի միջփողային, կամ ինչպես ասում են՝ միջշարքային տարածությունը նեղացնել։

Յանքի տեխնիկան մի քիչ ավելի բարդանում է ծածկոցի տակ ցանելիս։ Այս դեպքում խնդիրը լուծում են երկու եղանակով։ Երբ ծածկոցը հանդիսանում է գարնանացան ցորեն կամ գարի, գործում են շատ հասարակ ձևով։ Հողը նախապատրաստելուց հետո, ցանքի ճիշտ ժամկետին ցանում են ծածկոց հանդիսացող բույսը, ապա հարթում հողի մակերեսը ու տվյալ շարքացանը կանոնավորելուց հետո նույն օրը ցանում առվույտը։ Իսկ երբ ծածկոցը հանդիսանում է աշնանացան ցորեն, աշնանը ցորենն իր ժամկետին ցանկույց հետո հարթում են հողի մակերեսը ու վաղ գարնանը շարքացանով ցանում առվույտը։ Այս դեպքում չի կարելի շաղացան անել, որովհետև սերմի մեծ մասը մնում է աշնանացան ցորենի տերեածոցերում մինչև ցորենի բերքահավաքը, որի պատճառով էլ առվույտի ցանքը ստացվում է նոսր։ Շատերը վախենում են աշնանացան ցորենի մեջ գարնանը շարքացանով առվույտ ցանել, մտածելով, որ դրանով ցորենը արժատախիլ կարող են անել։ Նրանք մոռանում են, որ շարքացանի այդ ռետինյան փողերը շատ ավելի նուրբ են, քան զիգ-զագ փոցխի երկաթյա առամները, որոնցով գարնանը նույն աշնանացանները փոցխելիս ոչ միայն վնաս չենք ստանում, այլև տվյալ աշնանացանի բերքատվությունը դրանով բարձրացնում ենք։ Ուրեմն չպետք է վախենալ, որ աշնանացանները կփչանան, այլ համարձակ պետք է ձիու շարքացանով աշնանացանի մեջ ցանել առվույտը։

Յանքի 3-րդ ձևը առավել ևս բարդ է՝ դա կոմպլեքս ձևն է։ Ինչպես գիտենք, առվույտն իր բիբլոգիկական առանձնահատկություններով հիմնականում լավացնում է հողի քիմիական և մասամբ էլ ֆիզիկական հատկությունները։ Կան կուլտուրաներ էլ, որոնք

շնորհիվ իրենց բերդովական առանձնահատկությունների, ժնշածն, ուժեղ զարգացած արմատների լավացումն են հողի ֆիզիկական՝ դրուժյունը: Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը ապացուցել է, որ այդ երկու տարբեր տեսակի բույսերի միատեղ ցանքը լավացնում է հողի թե քիմիական ու թե ֆիզիկական դրուժյունը: Երկնով դրանից, շատ մոտ ժամանակներում մեր դաշտերում միայն առվույտ չի ցանվելու, այլ նա ցանվելու է հացազգիներին պատկանող բազմաձյա խոտերի հետ: Այդ դեպքում հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է կատարել ցանքը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժիտնյակը կամ ռայգրասը նույնպես առաջին տարին քիչ բերք են տալիս, դարձյալ ցանում են ծածկոցի տակ՝ առաջին տարվա բերքից չդիզվելու համար: Բանից դուրս է գալիս, որ միևնույն դաշտում, միևնույն տարում պետք է ցանել երեք տարբեր բույսեր (աշնանացան ցորեն կամ զարնանացան գարի, ժիտնյակ կամ ռայգրաս և առվույտ): Այս դեպքում ծածկոց հանգիստցող կուլտուրան ցանում են նույնպես առաջին հերթին: Ցանքից հետո դաշտի մակերեսը հարթում են ու թողնում: Եթե ցանվող ծածկոցը զարնանացան է՝ նույն օրը, իսկ եթե աշնանացան է՝ ապա վաղ զարնանը զաշտում ցանում են ժիտնյակի կամ ռայգրասի սերմը 3—4 սանտիմետր խորությունով: շարքացանը նորից կանոնավորելուց հետո այս անգամ ցանում են առվույտի սերմը 0—1,5 սմ խորությամբ: Սրանով առաջին տարին ստացվում է աշնանացան կամ զարնանացան ցորենի բերք, իսկ հաջորդ տարիներին մնում է առվույտի և նրա հետ ցանված բույսի խառը ցանքը:

ԱՌՎՈՒՅՑԻ ԽՆԱՄԲԸ

Առվույտի խնամք ասելով պետք է նկատի ունենալ հետևյալ խնդիրները.

1. Պարարտացնելը.
2. Զրելը.
3. Փոցելելը.
4. Մալխոտերի դեմ պայքարելը.
5. Վնասատուների ու գայլուկի դեմ պայքարելը.
6. Բերքահավաքը:

Ինչպես տեսանք առվույտի դաշտի պարարտացումը կատարվում է նախքան ցանքը կամ ցանքից հետո՝ առաջին, երկրորդ, երրորդ տարիներին։ Առվույտի պարարտացումը 2-րդ և հաջորդ տարիներին կատարվում է կամ վաղ դարձանը, կամ յուրաքանչյուր հնձից հետո։ Այդ տարիներին առվույտը կարելի է պարարտացնել օրգանական պարարտանյութերով։ Հանքային պարարտանյութերից առվույտը կարիք է զգում առաջին հերթին ֆոսֆորի, կալիումի և ազոտի։ Պարարտացնելիս անհրաժեշտ է հանքային պարարտանյութերը տալ հատկապես այն ժամանակ, երբ առվույտը տվյալ հնձից հետո դեռևս չի սկսել աճել, որպեսզի դրանով հայրենք առվույտի մատղաշ ցողունները։

ԱՌՎՈՅՏԻ ԶՐԵԼԸ

Առվույտի ջրերը կախված է նախ և առաջ հողի ջրային բախանից։ Չոր շրջաններում, ավազային հողերում, որտեղ ջրի քանակն ավելի քիչ է, առվույտը ջրվում է շատ ավելի հաճախակի, քան մնացած հողերում։ Առվույտի ջրերը կախված է նաև բույսի պահանջից. այդ պահանջը նկատվում է, երբ բույսի տերևները սկսում են կապտել, մուգ-կապույտ դույն ստանալ։ Զրեղը կախված է նաև մթնոլորտային տեղումներից, ստորերկրյա ջրերի մոտ լինելուց և այլն։

Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել առաջին ջրի վրա։ Ինչպիսի պայմաններում էլ ցանված լինի առվույտը՝ Արարատյան դաշտում, թե լեռնային շրջաններում, թեթև հողերում, թե ծանր կավային հողերում, ծածկուցի տակ, թե մաքուր, պետք է մտահոգված լինել, որ առաջին ջուրը տրվի անպայման առվույտի սերմերը ծլելուց հետո։ Այլապես շուտ ջրելիս սերմերի հիմնական մասը կամ ջուրը քշում-հեռացնում է դաշտից, կամ ընկնում է այնպիսի խորութեան մեջ, որ այլևս չի ծլում, իսկ դա նշանակում է, որ հողում նախօրոք պետք է ստեղծել այնքան քանակութեամբ խոնավութուն, որ անհրաժեշտ է առվույտի ծլելու համար։ Առաջին ջուրը պետք է կատարել շատ վաղ պետքեն, քիչ քանակութեամբ, որպեսզի պաշտպանենք դաշտի հետագա ապրիներին նորմալ բերքը։ Անկասուն ջրելու պատճառով՝ ջրի միջոցով սերմերը մի տեղից մյուս տեղը տանելու, ողողե-

լու հետեանքով դաշտում ստացվում է շատ խաշտաբլետ ցանք: Երկրորդ և հաջորդ ջրերի դեպքում այլևս ոչ մի վտանգ չկա և այդ պետք է կատարել այն ժամանակ, երբ դաացվում է դրա պահանջը: Սովորաբար պետք է խուսափել քաղի նախօրյակին առվույտի դաշտը ջրելուց, որովհետև դա մի կողմից ուշացնում է քաղը ժամանակին կատարելը, մյուս կողմից՝ ստացված խոտը շատ ջրառատ լինելու հետևանքով ավելի երկար ժամանակ է պահանջում չորանալու համար, հետևապես ավելի շատ է մնում դաշտում: Ամենից լավ է ջուրը տալ բերքահավաքը կատարելուց անմիջապես հետո և նրանից 6—7 օր հետո: Մեզ մոտ այդ հաշվով առվույտը ջրվում է մինչև 10 անգամ, ուստի առվույտի մշակման դեպքում պետք է անպայման նկատի ունենալ ջրային ռեսուրսները:

ԱՌՎՈՒՅՏԻ ԴԱՇՏԵՐԻ ՓՈՅՆԵԼԸ

Ինչպես տեսնում ենք, առվույտը մի քանի տարի մնում է միևնույն տեղում ու դրա հետևանքով հողը պնդանում է, հետեվապես անհրաժեշտ է լինում փոցխման միջոցով խախտել ստեղծված կապիլարահանութունը: Ապացուցված է, որ առվույտը երկրորդ և երրորդ տարում փոցխելու դեպքում՝ թփակալման հանգուցից դուրս են գալիս ավելի շատ ցողուններ: Ինչպես հետագոտյան են ասում՝ փոցխման միջոցով վերքեր են հասցնում առվույտի թփակալման հանգուցին ու այդ վերքը մի տեսակ դրգիո հանդիսանալով, ուժեղացնում է թփակալումը: Փոցխման միջոցով երեմն կարողանում ենք ոչնչացնել մուլխոտերի մի մասը, որոնք վաղ գարնանը ծլած լինելով, արմատախիլ են լինում: Փոցխման միջոցով մասամբ պայքարում ենք նաև վնասատուների դեմ, հատկապես թրթուրների դեմ, որովհետև նրանց ձվերի մի մասը լինում է առվույտի թփակալման հանգուցում և փոցխելիս ոչնչացվում է: Փոցխման հետևանքով բարձրանում է բերքատվությունը: Փոցխումը հանձնարարվում է կատարել վաղ գարնանը և չորաքանչյուր քաղից անմիջապես հետո, բացառությամբ վերջին հնձի: Աշխատանքը պետք է կատարել զբգ-զագ փոցխով: Փոցխելու քանակը և նրա որակը պայմանավորված է առվույտի հասակով: Երիտասարդ առվույտները փոցխում են մա-

կերեսորեն և մեկ անգամ, իսկ հին առվույտները փոցխում են ծանր փոցխերով, խորը և մի քանի անգամ:

ՊԱՅԳԱՐ ՄՈՂԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Առվույտի ցանքը հիմնական միջոցներից մեկն է, որով հնարավոր է կազմակերպել պայքար մոլախոտերի դեմ: Լավ և խնամքով դադարեցնելով կատարված ցանքի միջոցով հնարավորություն ենք տալիս առվույտին փարթամորեն աճելու:

Առվույտի փարթամ աճեցողությունը կախված է նրանից, թե ինչպիսի պայմաններ ենք ստեղծել դաշտում նրա աճման համար: Առվույտը սկզբնական շրջանում շատ դանդաղ է աճում, իսկ մոլախոտերն իրենց արագ աճով բավականին ճնշում են առվույտին: Հետևապես անհրաժեշտ է ոչնչացնել այդ մոլախոտերը, ըստ որում հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել զանդուրդանի, սեղի և այլ սուս ֆլա-սակար մոլախոտերի ոչնչացման վրա: Քաղհանի մի մասը կատարվում է աֆս ժամանակ, երբ ծածկոց հանդիսացող ցորենի դաշտն ենք քաղհանում: Ցորենը հնձելուց և առվույտի դաշտերը ջրելուց հետո կարիք է զգացվում քաղհանի միջոցով ոչնչացնել հատկապես զանդուրդանը:

ՊԱՅԳԱՐ ՎԵՍՍՍՈՒՆԵՐԻ ՈՒ ՊԱՐԱՋԻՏԵՆԵՐԻ ԴԵՄ

Ինչպես գիտենք առվույտի ցանքին բավական մեծ ֆլաս է հասցնում առվույտի թրթուրը կամ ինչպես անվանում են՝ ֆիտոնոմուսը: Այդ թրթուրը ամեն տարի մեր դաշտներից լա-փում է տասնյակ միլիոն ուրբիների հասնող կոլտնտեսային եկամուտ:

Յուրաքանչյուր տարի առվույտի դաշտերի առաջին հարը դոհ է գնում թրթուրին, որովհետև ֆլասատուն հիմնակա-նում միայն առաջին հարի ժամանակ է գտնվում թրթուր ստադիայում, իսկ մնացած ժամանակ նա գտնվում է զար-գացման այնպիսի շրջանում (հարսնյակ—բզեզ), որ այլևս մեծ ֆլասաներ հասցնել չի կարող: Ահա թե ինչու պայ-քարի հիմնական միջոցառումները պետք է կատարվեն դար-նանը, երբ ֆլասատուն գտնվում է թրթուր վիճակում: Թույլ

Թույններից (կրաջուր և այլն) թրթուրը մաղաչափ անգամ չի տուժում, իսկ ուժեղ թույններից էլ անասուններին թունավորելու վտանգ կա:

Վերջերս մի շարք հետադարձողներ առաջարկում են այսպես կոչված արսենատ կալցիում թույնով պայքարել առվույտի թրթուրների դեմ: Արտադրության մի շարք օգակներում պայքարի այդ մեթոդը մեծ արդյունքներ է տալիս, երբ դա կատարվում է ժամանակին՝ այն է վաղ գարնանը, երբ դեռևս թրթուրը նոր է սկսում դարգանալ:

Պակաս վնաս չի հասցնում նաև գայլուկը. նրա սերմերը առվույտի դաշտ են ընկնում կամ ցանվող սերմացուի, կամ ջրի, կամ քամու միջոցով: Գայլուկները բնության մեջ շատ են տարածված ու հախազանց բաղմաղան են: Կան խաղողի վաղի, ուռենու, երեքնուկի, պոլույտի և այլ կուլտուրական ու ոչ կուլտուրական բույսերի գայլուկներ:

Դաշտում գայլուկի սերմը ծլում է, տալիս է քլորոֆիլի հատիկներից զուրկ թելիկներ ու մի քանի օրից հետո իր ծծիչների միջոցով կառնում է առվույտի ցողուններին, կառնած տեղից, հանգույցից տալիս է նոր ծիլեր և այդպես արագ բազմանալով ստեղծում է գայլուկի օջախներ: Այդ չարիքի դեմ պայքարելը կատարվում է հետևյալ ձևով.

ա. Չպետք է թույլ տալ, որ ցանվող սերմացուի հետ ոչ մի հատիկ գայլուկի սերմ ընկնի դաշտը. իսկ դրա համար պետք է սերմացուն մանրակրկիտ ձևով անալիզի ենթարկել և եթե մեկ կիլոգրամ առվույտի սերմացուի մեջ թեկուզ մեկ հատ գայլուկի սերմ կա, ապա պետք է արգելել այդ սերմացուի ցանելը:

բ. Առվույտի դաշտում նկատված գայլուկի օջախները պետք է հնձել, և այդ պետք է կատարել մինչև գայլուկի ծաղկելը: Հնձված նյութը պետք է այրել:

գ. Կուրջ ուղադրություն պետք է դարձնել հատկապես այն դաշտերի վրա, որոնք թողնված են որպես սերմացու: Եթե բոլոր պիսի դաշտերում կա թեկուզ գայլուկի մեկ օջախ, այդպիսի դաշտերը սերմացուի համար չպիտի թողնել:

Մեզ մոտ առվույտի բերքահավաքի ժամկետի վրա հարկ եղած ուշադրութիւնը չեն դարձնում: Հոնձը կատարում են ուշացած, երբ մի կողմից խոտի ամենամանրարար մասերը—տերեփները թափված են լինում, մյուս կողմից էլ ցողուններն այն աստիճանի փայտացած են լինում, որ անասունները զժվարութեամբ են ուտում: Այսպիսով ստացված խոտը շատ կոպիտ լինելու հետևանքով ունենում է շատ ցածր կերարժեք:

Այլ երկրներում, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, առվույտի խոտն օգտագործում են որպես խոտցրած կեր: Մեզ մոտ էլ գործը պետք է կազմակերպվի քաջպես, որ առվույտից՝ ստացած չոր խոտը իր կերարժեքի տեսակետից շատ բարձր լինի: Այդ ամբողջութեամբ կախված է հնձի ժամանակից:

Առվույտը պիտք է հնձել այն ժամանակ, երբ դաշտում բույսերը հիմնականում կոկոնակալել են: Այդ ժամանակ հավաքած առվույտի խոտը լինում է շատ նուրբ. նրա ցողունները լինում են բարակ ու տերեփներով հարուստ: Այդպիսի խոտի մեջ սպիտակուցները, մոխիրը, ածխաջրերը և այլ սննդանյութերը լինում են մաքսիմում քանակութեամբ և ընդհակառակը՝ թաղանթանյութը լինում է մինիմում քանակի:

ԱՌՎՈՒՅՏԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսութեան արտադրութեան հիմնական խնդիրներին մեկն է՝ ապահովել գյուղատնտեսական կուլտուրաների, որոնց թվում նաև առվույտի ցանքերը լավորակ սորտային սերմանյութով: Բացի այդ, ցանքաշրջանառութեան լրիվ իրացումը պահանջում է ունենալ մեծ քանակութեամբ առվույտի սերմի պաշարներ: Առվույտի սերմով ապահովելու խնդիրը լուծվում է երկու կերպ. նախ՝ երբ տեղում, տվյալ զոնայում բազմացվում են տեղական լավորակ պոպուլացիաներ, աստիճանաբար բարելավելով նրանց բիոլոգիական, անտեսական հատկանիշները և երկրորդ՝ երբ առվույտի սերմնարուծութիւնը հիմնվում է դրսից բերվող կամ տեղում ստացվող սելեկցիոն սորտերի վրա:

Մեզ մոտ Մովկտական Հայաստանում առայժմ ձեռքի տակ

չունենալով ոչ տեղում ստացված, ոչ էլ դրսից բերված առվույ-
տի որևէ սելեկցիոն սորա, պետք է հատուկ ուշադրութեամբ
դարձնել դրանք շարունակ մեր յուրահատուկ բնության պայ-
մաններում մշակվող տեղական առվույտի պոպուլացիաների
բազմացման, նրա ցանքերի ընդարձակման վրա: Այդ աշխա-
տանքը առաջիկա տարիներում պետք է կազմակերպել երկու
ուղղութեամբ. մի կողմից կազմակերպելով հատուկ սերմնազա-
տեր, մյուս կողմից՝ օգտագործելով այդ նույն տեղական առ-
վույտների սովորական դաշտերը:

Երկու դեպքում էլ, նկատի ունենալով առվույտի ծաղիկ-
բիոլոգիան, հիմնականում նրա խաչաձև փոշոտվելը մի կողմից, իսկ
մյուս կողմից այն, որ մեր դաշտերը հագեցված են դրսից (Մի-
ջին Ասիայից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Տաճ-
կաստանից և այլ տարբեր տեղերից) տարիներ շարունակ ներ-
մուծված վատ որակի, մեր պայմաններում իրենց բոլորովին
չարգարացնող, քիչ բերք տվող բազմաթիվ պոպուլացիաներով,
տեղական պոպուլացիաների որակը չվատացնելու համար
անհրաժեշտ է սերմնադաշտերի մասսիվներում—սառնաններում
ցանված մյուս առվույտները ծաղկելուց առաջ հնձել:

ՍԵՐՄՆԱԴԱՇՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բազմամյա խոտաբույսերի սերմնաբուծութեան ագրոտեխ-
նիկայի բնագավառում, հատկապես բույսի սնման մակերեսի
նկատմամբ, գոյություն ունի բավականին խորը տարաձայնու-
թյուն: Հետազոտողներից շատերը գտնում են, որ առվույտի
սերմի բերքատվության բարձրացման խնդրում սնման մակե-
րեսի գերը մեծ է, որի պատճառով էլ առաջարկում են ցանքը
կատարել 45—75 սմ միջշարքային տարածութեամբ, երբեմն էլ
գտնում են նպատակահարմար կատարել առվույտի բնային ցանք:

Մի շարք հետազոտողներ ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսի ան-
միջական գլխավորութեամբ գտնում են, որ բազմամյա խոտա-
բույսերի ցանքի լայնաշարք ձևերն արտադրութեան մեջ իրենց
բոլորովին չեն արգարացնում, որ ցանքի այդ ձևը սելեկցիոն
կայաններից արտադրութեան է տեղափոխվել ուղղակի մեխա-
նիկորեն: Սելեկցիայում լայնաշարք ցանքն անհրաժեշտ է մի-

միայն սորտային քաղհանը կանոնավոր կատարելու համար, որից հետո բազմացումը պետք է տեղի ունենա նույն պիսի պայմաններում, ինչպիսի պայմաններում նա օգտագործվելու է արտադրության մեջ: Սերմ ստանալու դործն արագացնելու նպատակով, կիրառելով լայնաշարք ցանք, որի պայմանները հակառակ համեմատական են այն պայմաններին, որտեղ առկույտը մշակվելու է արտադրությունում, մենք ամենից ավելի հարմարվածների կենդանի մնալու շնորհիվ կատարում ենք սերմացու առկույտի ընտրություն՝ սերմ ստանալու նպատակով մշակելու համար: Խոտաբույսերի մշակման ժամանակ մեր հիմնական նպատակն է ստանալ շատ խոտ և միևնույն ժամանակ որպեսզի այդ բույսերն ունենան վարելաչեղություն հզոր արմատային սիստեմ: Բայց չէ՞ որ լայնաշարք մշակության դեպքում մենք առկույտի ընտրություն կատարում ենք շատ սերմ տալու հատկության տեսակետից, մոռանալով, որ բույսի շատ սերմ տալու հատկությունը կապված է վեգետատիվ օրգանների թուլացման և միևնույն ժամանակ նրա կյանքի տևողության կրճատման հետ: Այդ դեռ խնդրի մի կողմն է: Պարզվում է, որ առկույտի լայնաշարք և սովորական ցանքերից ստացված սերմի բերքի քանակի մեջ դրեթե տարբերություն չկա, որ սերմ ստանալու համար պահանջվող հիմնական միջոցառումները կիրառելիս՝ հնարավոր է սովորական ցանքերից էլ բարձր բերք ստանալ: Մեր դիտողություններից պարզվում է, որ առկույտի լայնաշարք ցանքի սերմի հասունացումը բավականին ձգձգվում է, տեղի է ունենում կորուստ, ստացված սերմերը խայտաբղետ են լինում, երբեմն էլ իրենց աբսոլուտ քաշով ու ծավալով ավելի փոքր, քան սովորական ցանքերից ստացված առկույտի սերմերը: Առկույտի սերմնադաշտը բամբակացան շրջանների պայմաններում սովորաբար մինչև այժմ տարեկան մեկ անգամ են թողնում սերմ ստանալու համար, իսկ մնացած հարերը հնձում են խոտի համար: Այստեղ էլ, ստացված բերքը երբ համեմատում ենք լայնաշարք ցանքերից ստացված առկույտի խոտի քանակի և որակի հետ, պարզվում է, որ լայնաշարքի դեպքում ավելի քիչ ու վատ խոտ է ստացվում, քան առկույտի սովորական ցանքերից:

Ինչ խոսք, որ առկույտի լայնաշարք ցանքի դեպքում մեկ

միավոր տարածութեան վրա անհամեմատ ավելի քիչ արմատներ են լինում, քան սովորական ցանքի դեպքում. հետևապէս, լայն շարքերի դեպքում ֆիքսութեմ ազոտը և հողում կուտակված չոր մասսան ավելի քիչ է լինում, քան սովորական ցանքերի դեպքում: Բացի այդ, բամբակացան շրջաններում առավույտի լայնաշարք ցանքերը պահանջում են յուրաքանչյուր տարի առնվազն 3—4 անգամ քաղհանել, յուրաքանչյուր քաղհանից հետո փխրեցնել, յուրաքանչյուր ոռոգումից հետո նույնպէս փխրեցնել, և այդպէս շարունակ միջշարքային տարածութիւններն հաճախակիորեն մշակելով, բազմամյա խոտի այդ դաշտը ինքնըստինքյան պահանջում է լրացուցիչ մեծ աշխատանք: Այս բոլորից հետո այն եղրակացութիւնը պետք է հանել, որ սերմնաբուծական նպատակների համար պետք է օգտագործել առավույտի սովորական ցանքերը՝ կիրառելով անհրաժեշտ միջոցառումներ սերմի բերքատուութիւնը բարձրացնելու համար: Անհրաժեշտ է հիշատակել այն հանգամանքը, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում էլ սկզբում բավականին մեծ չափով էին կիրառում առավույտի լայնաշարք ցանքերը, բայց վերջերս Ամերիկայի ֆերմերներն ու փորձակայանները նույնպէս գերադասում են ցանել սովորական նեղ շարքերով:

ԴԱՇՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սերմի համար դաշտի ընտրութիւնը կատարվում է աշնանը կամ գարնանը, այն հաշվով, որ հնարավոր լինի այդտեղ ժամանակին կատարելու բոլոր հիմնական միջոցառումները՝ բերքատուութեան բարձրացման համար: Նպատակահարմար է, որ այդ դաշտերը լինեն 2-րդ և 3-րդ տարվա ցանքեր, որոնք պետք է միանգամայն ղերծ լինեն դաշուկի, դաշուղղանի և այլ վնասակար ու կարանտին մոլախոտերից: Այն դեպքում, երբ առավույտի ցանքը կատարված է որևէ բազմամյա հացազգի բույսի հետ միասին, նման դաշտը սերմի համար չեն թողնում:

Ո՞ր ճարք բոլմել սերմի համար. — Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, թե ինչ վիճակում է գտնվում խոտը, վնասատուների, տվյալ դեպքում ֆիտոպոմոսի հաս-

ցրած փնաքի չափը, մթնոլորտային տեղումների քանակն առաջին և երկրորդ հարի ժամանակ, ստորերկրյա ջրերի խորությունը և մոլախոտերով վարակվածությունը, փոշոտիչների (մեղու) մասսայական թռիչքի ժամանակը և այլն: Այն բոլոր դեպքերում, երբ առաջին հարի ժամանակ Ֆիտոնոմոնան է երևացել, եղանակներն անձրևային են ու մեղունները քիչ են հաճախում առվույտի դաշտը, պետք է սերմի համար թողնել երկրորդ հարը. հիմնականում այդպես էլ կատարվում է բամբակացան շրջաններում: Հեռնային և նախալեռնային շրջաններում, ընդհակառակը, սերմի համար թողնվում է առաջին հարը, որովհետև առաջին հարը սովորաբար չի վարակվում Ֆիտոնոմոնոսով, ապահովված է փոշոտիչներով և որ ամենից կարևորն է, երկրորդ հարը համընկնում է անձրևային եղանակների հետ:

Ոռոգում. — ՄՍԻՄ-ում առվույտի սերմնաբուծական մասափները 2 խմբի են բաժանվում. առաջինը ոռոգվող շրջաններ՝ հիմնականում Միջին-Ասիական ռեսպուբլիկաներն են և Անդերկովկասի բամբակացան շրջանները, որտեղ տարեկան մթնոլորտային տեղումները 300 մմ-ից չեն անցնում, այն էլ գլխավորապես տեղի են ունենում ձմռան ամիսներին: Երկրորդ խմբի մեջ մտնում են չոռոգվող շրջանները, հիմնականում Ուկրաինան:

Սերմի բերքն ոռոգվող շրջաններում անհամեմատ ավելի բարձր է, քան չոռոգվող շրջաններում. այսպես օրինակ՝ Միջին Ասիայում նա հավասար է 4—6 ցենտների, մինչդեռ չոռոգվող շրջաններում, օրինակ Պալաավայի փորձակայանում՝ 1 ցենտներ: Ոռոգվող այդ շրջաններում երկարատև վեգետացիայի հետևանքով հնարավոր է սերմի համար ընտրություն կատարել 3 հարերի միջև, թողնելով ամենահաջող հարը, մինչդեռ չոռոգվող շրջաններում հնարավոր է թողնել միայն առաջին հարը. Ոռոգումը առվույտի սերմնաբուծության գործում ամենավճարակաճ գործոններից մեկն է: Փորձերը ցույց են տալիս, որ առվույտի սերմի բարձր բերք ստանալու համար ժամանակին և խնամքով կատարված ագրոմիջոցառումների ազդեցությունը հավասարվում է գերոյի, եթե սերմնադաշտը ոռոգվում է չափից դուրս, կամ եթե ոռոգումը ժամանակին չի կատարվում:

Հողի չափից դուրս խնամվածության դեպքում, նամանավանդ ծաղկման շրջանում, տեղի է ունենում նոր ցողունների ուժեղ

ած: Միեւնույն թփակաւման հանդուցից անում են երկու խումբ ցողուններ՝ հին և նոր, որոնց ուժեղ զարգացման հետեանքով խախտոււմ է ծաղկման և դոյալացած պտղի զարգացման և սնման նորմալ ընթացքը, որի հետեանքով ծաղիկներն ու պտուղները սաստիկ թափուում են: Ահա թե ինչու նման պայմաններում (չափից դուրս ոռոգման կամ ստորերկրյա ջրերը մոտ լինելու դեպքում) սերմի բերքը լինում է շատ ցածր:

Առվույտի սերմնադաշտի ոռոգման խնդիրը լուծելիս, որպէս կանոն, պետք է ելնել հետեւալից՝ տվյալ դաշտը բուսման րի անձան սկզբից (լինի դա առաջին, թե երկրորդ հարից հետո) մինչև ծաղկման սկիզբը պետք է ապահովված լինի խոնավութեամբ, որից հետո, հատկապէս ծաղկման շրջանում, չպետք է ոռոգել և բույսի փոշոտումը պետք է տեղի ունենա հողի սակավ խոնավութեան պայմաններում: Եթե սերմի համար թողնվել է երկրորդ հարը, պետք է դաշտը ոռոգել 1 կամ 2 անգամ, ըստ որում առաջին ջուրը պետք է տալ առաջին հարից անմիջապէս հետո, իսկ երկրորդը՝ կոկոնակաւման ֆազի սկզբին: Եթե սերմնադաշտի հողային պայմանները այնպիսին են (ավազոտ, քարքարոտ են, ստորերկրյա ջրերը շատ խորն են և այլն), որ դաշտը պահանջում է ավելի շատ անգամ ոռոգել, այս դեպքում պետք է ջրել ոչ թե երկու, այլ երեք անգամ, պահպանելով այն սկզբունքը, որ երրորդ ջուրը կատարվի կոկոնակաւման ֆազում:

Փոշոտիչներով ապահովելը. — Առվույտը միջատների միջոցով փոշոտվող կուլտուրա է: Շատ և լավ սերմ ստանալու համար անհրաժեշտ է ժամանակին հող տանել, որ առվույտի ծաղիկների առավել փոշոտման համար լինեն փոշոտիչներ: Կան դիտողութեւններ, որ առվույտի հիմնական փոշոտիչները հանդիսանում են վայրի մեղուները: Կան նաև դիտողութեւններ, որ այդ աշխատանքը կատարում է նաև ընտանի մեղու, որն օգտվում է առվույտի ծաղիկների նեկտարից և միաժամանակ իր մարմնով զարկում ծաղիկի փոշապարկերին: Դրա հետեանքով վերջիններս պատուվում են և փոշին մեղուների միջոցով մի ծաղկից մյուս ծաղիկն է տեղափոխվում, որով և կատարվում է խաչածն փոշոտում: Ահա այդ նպատակով էլ առվույտի ծաղկման շրջանում սերմնադաշտերի մոտ են դասավորում մեզվի ընտանիքները:

Բերքահավաքը. — Առվույտի սերմացուն պետք է հավաքել
այն ժամանակ, երբ պատիճները 75—80 տոկոսով գորշացել-հա-
սունացել են և սերմերը կարծրացել: Ավելի ուշացնել պետք
է, որովհետև սերմերը թափվում են ու կորուստը մեծանում է:
Բերքահավաքը կատարվում է մեքենաներով և ձեռքի գործիք-
ներով (գերանդի, մանգաղ): Կտրելի է հնձել նաև զանազան
խոտհար մեքենաներով: Կորուստներից խուսափելու համար,
հուշմը պետք է կատարել առավոտյան ժամերին—5—10-ը և հըն-
ձած առվույտը պետք է փոխադրել կալսելու վայրը նույնպես
առավոտյան ժամերին: Եթե բերքահավաքը կատարվել է գոր-
ծիքներով կամ խոտհար մեքենաներով, անհրաժեշտ է հնձածը
փոքրիկ խրձիկներով փոխադրել կալսելու վայրը, լավ չորացնել
ու կալսիչներով կալսել: Նկատի ունենալով, որ սերմերը պատի-
ճից դժվարությամբ են ազատվում, առվույտի թեղը կալ-
սիչի միջով անց են կացնում 2—3 անգամ՝ մինչև որ սեր-
մերն ամբողջությամբ անջատվեն:

Գայլուկի սերմերից ազատվելու համար անհրաժեշտ է ըս-
տացված առվույտի սերմը անցկացնել կուակուտա անջատող մե-
քենայի միջով 2—3 անգամ՝ մինչև սերմի լրիվ զտվելը: Սեր-
մի զտումից առաջացած ֆուսցորդը (թեղի մի մասը, գայլուկի և
այլ մոլախոտերի սերմերը և այլն) չպետք է օգտագործել որ-
պես կեր, այլ պետք է այրել, որովհետև գայլուկի և այլ մոլա-
խոտերի սերմերն անցնելով անասունի մարսողության տրակտով՝
չեն կորցնում իրենց ծուռնակությունը: Առվույտի սերմերը նախ-
քան պահեստ փոխադրելը պետք է լավ չորացնել:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
1. Առվույտի նշանակութիւնը	3
2. Առվույտի մշակման պատմութիւնը	4
3. Առվույտի տեսակները	5
4. Առվույտի հիմնական ձևերը	6
5. Հայաստանի տեղական առվույտները	8
6. Առվույտի մշակման հիմնական շրջանները	9
7. Առվույտի վերաբերմունքը հանդեպ կլիմայի	10
8. Առվույտի վերաբերմունքը հանդեպ հողի	14
9. Առվույտի ազդեցութիւնը հողի քիմիական	
ու ֆիզիկական վիճակի վրա	15
10. Առվույտի երկարակեցութիւնը	17
11. Առվույտի բերքատուութիւնը	18
12. Առվույտի տեղը ցանքաշրջանառութեան մեջ	19
13. Առվույտի դաշտի մշակութիւնը	20
Պարարտացումը	21
Սերմի նախապատրաստումը	25
Ցանքի խտութիւնը	26
Ցանքի ժամանակը	27
Ցանքի խորութիւնը	28
Առվույտի ինտելույացիան	29
Ցանքի տիխնիկան	29
14. Առվույտի խնամքը	31
Առվույտի ջրելը	32
Առվույտի դաշտի փոքիւնը	33
Պայքար մոլախոտերի դեմ	34
Պայքար վնասատուների ու պարազիտների դեմ	34
Բերքահավաքը	36
15. Առվույտի սերմնաբուծութիւնը	36
Սերմնապաշտի կազմակերպումը	37
Դաշտի ընտրութիւնը	39

Մտորագրված է տպագրելու 1947 թվի հունվարի 9-ին, տպադր. 2³/₄ մամ.
մամուլում 36.800 նիշ, պատվեր 1081, հրատ. № 368, տիրած 3000, վճ. 00189

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Արրոյանի № 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008639

ԳԻՆԸ 3 Ռ.

3178

A $\frac{\pi}{18421}$